

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝  
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ**

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» գիտամեթոդական ամսագիր  
"BULWARK OF LAW" scientific-methodical journal

*Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ*

Լրատվական գործունեություն իրականացնող՝  
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման  
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ [www.edupolice.am](http://www.edupolice.am),

Էլեկտրոնային փոստ՝ [orenqipatvarjournal@mail.ru](mailto:orenqipatvarjournal@mail.ru),

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ  
Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով  
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:  
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ  
ОРГАНИЗАЦИЯ "ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС  
ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал

*Издается по рекомендации Научного совета  
Образовательного комплекса полиции Республики Армения*

**Лицо, осуществляющее информационную деятельность:**

Государственная некоммерческая организация  
"Образовательный комплекс полиции Республики Армения"

**Сертификат регистрации- 03U085891,**

выдан: 15.09.2009 г.

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: [www.edupolice.am](http://www.edupolice.am)

Электронная почта: [orenqipatvarjournal@mail.ru](mailto:orenqipatvarjournal@mail.ru)

Тел: 010-77-15-24

Ответственный по выпуску номера: заместитель главного редактора Артак  
Мнацаканян

Редакция может опубликовать материалы, не соглашаясь с мнениями  
авторов.

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

**Գլխավոր խմբագիր** - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Տիգրան Եսայան,**

**Գլխավոր խմբագրի տեղակալ** - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. **Արտակ Մնացականյան,**

**Պատասխանատու քարտուղար** - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Միրանուշ Պողոսյան:**

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Գրիգոր Բաղիրյան,**

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, արդարադատության գնդապետ, ի.գ.թ., պրոֆեսոր **Արթուր Ղամբարյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.թ. պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան,**

ՀՀ ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Ահարոնյան,**

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Տիդանյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան:**

## РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Главный редактор** - первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Тигран Есаян,**

**Заместитель главного редактора** - начальник отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук **Артак Мнацаканян,**

**Ответственный секретарь** - заместитель начальника отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции **Сирануш Погосян.**

### ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук **Григор Бадирян,**

Заместитель председателя Следственного комитета, полковник юстиции, доктор юридических наук, профессор **Артур Гамбарян,**

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян,**

Начальник штаба Полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Оганес Кочарян,**

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции **Ашот Агаронян,**

Начальник Национального бюро Интерпола РА, полковник полиции, кандидат юридических наук **Ара Фиданян,**

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Гагик Григорян,**

Начальник юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян,**

Начальник кафедры уголовного права и криминологии академии юридического факультета Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян,**

Начальник кафедры теории государства и права и конституционного права юридического факультета Образовательного комплекса полиции РА, майор полиции, кандидат юридических наук **Руслан Марандян.**

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1918 թվականի հուլիսի 24-ին հրապարակվեց Հայաստանի առաջին հանրապետության անդրանիկ կառավարության կազմը: Այս կառավարությունում ձևավորվեց Ներքին գործերի նախարարությունը, որը գործել է առաջին Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում:

Հենց այս ծանր ժամանակահատվածում էր, որ Ներքին գործերի նախարարությունը պետք է նորանկախ պետությունում ապահովեր կարգուկանոն, ձեռնամուխ լիներ իրավապահ գործունեության զարգացմանը: Դրա մասին էր վկայում 1920 թվականին ՆԳՆ նախարար Ս. Արարատյանի «Շրջաբերական-Հրահանգը», որտեղ մասնավորապես նշվում էր. «Ամենից առաջ երկրում նկատելի են հիմնական չարիքներ - դասալքություն՝ որ քայքայում է մեր բանակը, չարաշահություն՝ որ քայքայում է մեր տնտեսական կյանքը: Ապօրեն կարգադրություններ ու բռնագրավումներ, ավազակային գործունեություն ու զեղծումներ, որոնք վարկաբեկում ու քայքայում են Հանրապետությունը»:

Թերևս այս պատճառով ՆԳ նախարարության լիազորություններն աննախադեպ էին. իր հիմնական գործառույթն իրականացնելուց զատ, նախարարությանն էին ենթարկվում հանրապետության կապի և հեռահաղորդակցության ոլորտը, երկաթուղին, դպրոցական համակարգը: Այս կարճ ժամանակահատվածում ՆԳ նախարարությունը կայացավ և դարձավ կարևորագույն մարմին պետական կառավարման համակարգում:

Այսպիսով, ՀՀ առաջին կառավարության կազմում Ներքին գործերի նախարարության ստեղծման պահից արդեն անցել է 100 տարի: Այս ընթացքում կատարվել են բազմաթիվ և բազմապիսի փոփոխություններ, և արդեն այսօր մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ ունենք որակական առումով լրիվ նոր և արդյունավետ ուստիկանական կա-

ռույց: Կառույց, որը մշտապես բարեփոխվելով՝ մեծ արդյունավետությամբ ապահովում է մարդու անվտանգությունը, հանցագործությունների կանխումը և բացահայտումը, հասարակական կարգի պահպանությունը, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը: Մի կառույց, որի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների վրա:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհավորել ՀՀ ոստիկանության բոլոր ծառայողներին և վետերաններին ՀՀ Ներքին գործերի նախարարության ստեղծման 100-ամյակի կապակցությամբ և մաղթել քաջ առողջություն, մեծ կամքի ուժ և պատվով ծառայություն:

*Հարգանքով՝*

*գլխավոր խմբագիր*

*Տիգրան Եսայան*

---

## К читателю.

24 июля 1918 года было сформировано первое правительство Армении, в состав которого вошло также новообразованное Министерство внутренних дел.

В этот трудный для молодого государства период именно на плечи Министерства внутренних дел легла нелегкая задача по обеспечению общественной безопасности. О сложившейся ситуации свидетельствует директива министра МВД С.Арапаяна от 1920 года, в которой в частности отмечалось, что «основными напастями для страны являются: дезертирство, разлагающее нашу армию, а также разного рода должностные злоупотребления, подрывающие экономику страны. В то же время незаконные указания и конфискации, разбойные проявления и мошенничество дискредитируют и разлагают нашу Республику».

Именно по этой причине полномочия Министерства внутренних дел были беспрецедентными: кроме выполнения возложенных на органы внутренних дел основных функций, Министерству подчинялись структуры республиканской связи и телекоммуникации, железная дорога, а также система школьного образования. За этот короткий промежуток времени Министерство смогло укрепить свои позиции и стать одним из важнейших органов в системе государственного управления.

Таким образом, с момента создания Министерства внутренних дел прошло уже 100 лет. За прошедший период своего существования, оно претерпело серьезные структурные изменения, и сегодня с гордостью можно утверждать о том, что мы имеем современную и эффективную правоохранительную структуру - Полицию Республики Армения.

Постоянно совершенствуясь, Полиция Республики с большой ответственностью относится к обеспечению безопасности граждан, предотвращению и раскрытию преступлений, охране общественного порядка и защите всех видов собственности.

Деятельность полиции основана на принципах законности, уважения прав и свобод, чести и достоинства личности, гуманизма и гласности.

Пользуясь предоставленной возможностью, хочу поздравить всех сотрудников и ветеранов Полиции со знаменательным юбилеем - 100-летием со дня образования Министерства внутренних дел Армении. Желаю всем счастья, здоровья и успехов в благородной и почетной службе!

*С уважением,*

*Главный редактор*

*Тигран Есаян*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ալեքսանյան Բենիամին**

ՆՈՐԸ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅՈՒՄ ..... 10

**Աղայան Ռուբեն, Աղայան Սարիկ**

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 27

**Գասպարյան Աշոտ**

ԿՐԱԿՈՑԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ..... 36

**Դավթյան Մելանյա**

ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 44

**Խաչատրյան Հռիփսիմե**

ՋԵՆՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ..... 54

**Կոչուբաս Ալեքսանդր**

ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ ..... 66

**Մելիքսեթյան Արմինե**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍԱՆՈՂ-ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՍՈՒԿ ՁԵՎ ..... 79

**Аветисян Карен Арташевич**

ИСПОЛЬЗОВАНИЕ РЕЗУЛЬТАТОВ АНАЛИЗА МЕЖНАЦИОНАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ В ПЛАНИРОВАНИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ТЕРРИТОРИАЛЬНЫХ ОРГАНОВ ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ..... 86

**Аносов Александр Викторович**

ИСПОЛЬЗОВАНИЕ ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИХ МЕТОДОВ В ПРОЦЕССЕ ИНДИВИДУАЛЬНО-ПРОФИЛАКТИЧЕСКОЙ РАБОТЫ С НЕСОВЕРШЕННОЛЕТНИМИ УЧАСТНИКАМИ АНТИОБЩЕСТВЕННЫХ ГРУПП ..... 94



---

<b>Воронин Михаил Юрьевич, Смольянинов Евгений Серафимович, Трунцевский Юрий Владимирович</b> ФОРМИРОВАНИЕ ОСНОВ УГОЛОВНОЙ ПОЛИТИКИ В БОРЬБЕ С ВЫСОКОТЕХНОЛОГИЧНЫМИ ПРЕСТУПЛЕНИЯМИ .....	103
<b>Ищук Ярослав Григорьевич</b> ИНДИВИДУАЛЬНАЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНАЯ ПРОФИЛАКТИКА ПРЕСТУПЛЕНИЙ В СФЕРЕ НЕЗАКОННОГО ОБОРОТА НАРКОТИКОВ .....	112
<b>Казарян Кристина Васаковна, Тутинас Евгения Вячеславовна</b> ОСОБЕННОСТИ ПРАВОВОЙ СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОГО АНТИКОРРУПЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ .....	121
<b>Павличенко Николай Владимирович, Воронин Михаил Юрьевич</b> ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ КОМПЕТЕНЦИИ КАК ОСНОВА ПОДГОТОВКИ НАУЧНО-ПЕДАГОГИЧЕСКИХ КАДРОВ .....	128
<b>Bragina Alexandra, Gridchin Alexander</b> INTERNATIONAL PROTECTION AWARDED TO ASYLUM SEEKERS ON INTERCONTINENTAL AND REGIONAL LEVEL .....	136

## ՆՈՐԸ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅՈՒՄ

### Ալեքսանյան Բենիամին

*ՀՀ ռատիկանության կրթահամալիրի ակադեմիայի*

*խրավագիտության ֆակուլտետի*

*ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,*

*ռատիկանության փոխգնդապետ*

**Անձի պարզումն ականջախեցու ձևի միջոցով.** Անգլիակա Մաուտգեմպտոնի համալսարանի հետազոտողները մշակել են նոր ծրագրային արտադրանք, որը կարողանում է որոշել մարդու ինքնությունը նրա ականջախեցու պատկերի միջոցով:

Ծրագրային տեխնոլոգիան, որը մշակողները կոչել են Ray Transform («Лучевая трансформация изображения», «Պատկերի ճառագայթային ձևափոխություն»), կարող է օգտագործվել հարթ ցանցապատկերից փողակային և բոլորածիր պատկերներ ստանալու համար: Օրինակ՝ կարելի է ստանալ ականջի վերին աղեղի և դրա այլ մասերի մաթեմատիկական նկարագիրը: Յուրաքանչյուր մարդու ականջախեցու կառուցվածքն անհատական է, և դրա նկարագրով կարելի է հավաստիորեն պարզել անձին:

Ալգորիթմը մշակվել է Մաուտգեմպտոնի համալսարանի ստորաբաժանում հանդիսացող էլեկտրոնիկայի և համակարգչային գիտությունների դպրոցի պրոֆեսոր Մարկ Նիքսոնի, դոկտոր Ջոն Քարտերի և Ալիստեր Կամմինգսի կողմից: Պրոֆեսոր Նիքսոնը դիտողական կենսաչափության տեխնոլոգիայի 1-ին հետազոտողներից մեկն է: 2005թ. նա ապացուցեց ականջախեցու օգտագործման հնարավորությունը՝ որպես մատնադրոշմների փոխարինողի:

Ճառագայթային ձևափոխության տեխնոլոգիան պատկերը լուսարկում է հազարավոր վիրտուալ ճառագայթներով: Այդ ալգորիթմը թույլ է տալիս հարթ ցանցապատկերով ստանալ եռաչափ հավաստի մոդելը: Ավելի ճիշտ ձևափոխել նկարը երկչափ «ապակե» կառուցահատվածների զանգվածի՝ յուրաքանչյուրը համապատասխանում է մեկ պիկսելի: «Ապակյա» տարրի մասնատման գործակիցը կախված է սկզբնական պատկերում կետի գույնի ինտենսիվությունից:

Ա. Կամմինգսի խոսքերով՝ տարածական կառուցվածքները, ինչպիսին ականջախեցին է, պատկերի վրա «նկարվում» են սահուն փոփոխվող ինտենսիվությամբ:

Փորձարկումների ընթացքում ծրագիրը վերլուծել է 250000-ից ավելի պատկերներ, և ականջախեցիները ճիշտ է նույնացրել 99.6% դեպքերում, սակայն համակարգի աշխատանքին խանգարում են ակնոցների աղեղնակները և ականջի վրա թափված մազերը:

Կամմինգսը գտնում է, որ ականջախեցու ձևով անձի դիտողական նույնացումը ճառագայթային ձևափոխության տեխնոլոգիայի օգնությամբ կարող է օգտագործվել աչքի ծիածանաթաղանթի և դեմքի ճանաչման ալգորիթմների հետ միասին՝ դրանով իսկ մեծացնելով կենսաչափական բնութագրով անձին պարզելու հավաստիությունը: Այս տեխնոլոգիան կարող է լրացնել տեսահսկման ոստիկանական այն համակարգերը, որոնք օգտագործվում են մարդաշատ քաղաքների փողոցներում կասկածյալներին փնտրելու համար<sup>1</sup>:

**Ստեղծվել է նստատեղի միջոցով անձի պարզման նույնացուցիչ.** Մինչ որոշ գիտնականներ կատարելագործում են անձի ճանաչման տեխնիկական միջոցները, մյուսները զբաղվում են հետույքով անձի պարզմամբ և հասել են տպավորիչ հաջողությունների: Ինչպես երևում է, հեռու չէ այն օրը, երբ ավտոմեքենաների նստատեղերը կճանաչեն վարորդին գոտկատեղից ներքև գտնվող իրանի մասերով:

Ինչպես տեղեկացնում է Phys Org.com-ը, արտադրական տեխնոլոգիաների առաջատար ինստիտուտի (AIIT) ճապոնացի ինժեներները ներկայացրել են հակաառևանգման համակարգի նախատիպը, որն անձին ճանաչում է հետույքով 98% ճշտությամբ:

Անհատական նույնացուցիչն իրենից ներկայացնում է ճնշման 360 տվիչներից բաղկացած զանգված, որն աշխատում է 0-ից մինչև 256 սանդղակով: Արդյունքում համակարգչին է փոխանցվում նստատեղի վրա ճնշման տեղաբաշխման ամբողջական պատկերը՝ ներառված հպման կետերի և դրանց բծերի մակերեսների վերաբերյալ տվյալները: Այսպիսով՝ կերտվում է «օգտագործողի կիսապատկերի» եռաչափ արտացոլվածքը, որի միջոցով համակարգը հետագայում ճանաչում է մարդուն և թույլ է տալիս նրան գործի գցել

<sup>1</sup> [http://www.secnews.ru/foreign/16329.htm?sphrase\\_id=33956](http://www.secnews.ru/foreign/16329.htm?sphrase_id=33956)

շարժիչը (որպես տարբերակ ակտիվացնում է անհատական կարգավորման հավաքածուն՝ դեկ, հայելի, թիկնաթոռ և այլն):

«Համակարգը վերլուծում է թեքվածքները, ծռվածքները, խորխորատները, կատարները, և ավտոմեքենան չի ընթանա, եթե դա ձեր հետույքը չէ», - հեզնում է Wired պարբերականը: Ճիշտ է, հասկանալի չէ, թե համակարգն ինչպե՞ս է արձագանքելու տաբատների տարբեր տեսակներին, հետին գրպանում եղած դրամապանակին կամ էլ ձմռան ընթացքում հավաքած ավելորդ ճարպին:

Միաժամանակ ճապոնացի հետազոտողներն ուշադրություն են հրավիրում ավանդական կենսաչափական տեխնոլոգիաների հետ համեմատած իրենց «նստատեղի նույնացուցիչ» ունեցած առավելությունների վրա: Իբր սովորական տեսածրիչները (սկաներները) և ինֆորմացիա կարդացող սարքերը սթրես են առաջացնում, այդպիսի համակարգերի տվիչները կարող են խափանվել կեղտոտվածության կամ մթության պատճառով:

Բացի այդ, ինժեներները նկատում են, որ նոր համակարգը կարող է օգտագործվել ոչ միայն ավտոմեքենաներում, այլ նաև աշխատասենյակներում, որպեսզի համակարգիչները ճանաչեն իրենց տերերին:

Հեղինակները հույս ունեն, որ առաջարկվող տեխնոլոգիայի նկատմամբ հետաքրքրություն կցուցաբերեն հատկապես ավտոարտադրողները<sup>2</sup>:

**Անձի նույնացումը կենսաչափական պարամետրերի միջոցով.** Ներկայումս մատնադրոշմումը, աչքի ցանցաթաղանթի տեսածրումը (սկանավորումը) կամ ձայնի առանձնահատկությունները լրտեսականից վերաճել են ժամանակակից կյանքի տարբեր ոլորտներում անվտանգության և հարմարավետության ապահովման միջոցների: Խոսքը գնում է կենսաչափական տեխնոլոգիաների մասին:

Մարդաչափական է կոչվում անձի նույնացման համար ծառայող սարքերի և եղանակների ամբողջությունը, որոնք հիմնված են նրա վարվելաձևի և ֆիզիոլոգիական յուրահատուկ բնութագրերի վրա:

Նույնացման այս տեսակը կարող է օգտագործվել շինություններ, համակարգիչներ, բանկոմատներ, բջջային հեռախոսներ՝ արգելված մուտքը կանխելու համար:

Կենսաչափական հատկություններով օժտված են համարվում՝

<sup>2</sup> <http://www.membrana.ru/particle/17323>

- մատնադրոշմները,
- դեմքի երկրաչափական ուրվապատկերը,
- աչքերի ծիածանաթաղանթները,
- ցանցաթաղանթի ուրվանկարները,
- ձայնը,
- ձեռագիրը,
- դրոշմվածքները ստեղնաշարի վրա,
- երակների պատկերը ձեռքերի վրա և այլն:

Կենսաչափական նույնացման առավելությունները: Կենսաչափական պաշտպանությունը տպավորիչ արդյունքներ է ապահովում համեմատած, օրինակ, գաղտնաբառերի, սմարթ-քարտերի, PIN-կոդերի, ժետոնների կամ բաց բանալիների ենթակառուցվածքային տեխնոլոգիաների օգտագործման հետ: Դա բացատրվում է ոչ թե սարքերի, այլ մարդկանց նույնացնելու կենսաչափության հնարավորությամբ:

Պաշտպանության սովորական մեթոդները տեղեկությունների կորստի կամ կորզելու վտանգ են պարունակում, և արդյունքում անօրինական օգտագործողների համար դառնում են մատչելի: Այնինչ, այնպիսի բացառիկ կենսաչափական նույնացուցիչը, ինչպիսին, օրինակ, մատների դրոշմներն են, հանդիսանում են կորստի չենթարկվող բանալիներ:

Կենսաչափական եղանակների դասակարգումը: Ըստ կիրառվող տեղեկատվության տեսակի կենսաչափական նույնացումը բաժանվում է՝

- **Ստատիկ եղանակների.** Սրանք հիմնված են մարդու ծնված օրից բնությունից տրված բացառիկ հատկությունների վրա, որոնք անբաժանելի են նրանից: Օրինակ՝ ֆիզիոլոգիական ցուցանիշները (դաստակի գծապատկերը կամ մատների մաշկապտկիկային նախշերը) մարդու համար հանդիսանում են անփոփոխելի:

- **Դինամիկ եղանակների.** Սրանք հիմնված են անձի վարքագծային (այսինքն՝ շարժունակության) բնութագրի վրա: Այս առանձնահատկությունները բնութագրական են որոշակի գործողություններ կատարելիս ենթագիտակցորեն շարժումներ կատարելուն (խոսելիս, ստորագրելիս, ստեղնաշարով աշխատելիս): Այդպիսի վարքագծային բնութագրերը իրենց ազդեցությունն են թողնում ղեկավարվող և ոչ ամբողջությամբ ղեկավարվող հոգեբանական գործոնների վրա: Փոփոխական լինելով պայմանավորված՝ կենսաչափական նմուշները օգտագործման ընթացքում պետք է թարմացվեն:

Ներկայացնենք մշակվող տեղեկությունների տեսակներին համապատասխանող կենսաչափական նույնացման տեսակները:

**Կենսաչափական պարամետրերով անձի նույնացման եղանակները:**

Կենսաչափության հեռանկարները: Անձի նույնացման գերակա եղանակ շարունակում է մնալ մատնադրոշմներով ճանաչումը: Դրա համար գործում են երկու հիմնական պատճառներ՝

✓ շատ երկրներ սկսել են անցում կատարել կենսաչափական անձնագրերի:

✓ փոքրածավալ սարքերում (հեռախոսներում, դյուրակիր համակարգիչներում և այլն) մատնադրոշմների տեսաձրիչների նորացված մոդելների մշակումը:

Էական ընդլայնում կարելի է սպասել ստորագրությամբ նույնականացման ոլորտում՝ հաշվի առնելով թվային էլեկտրոնային ստորագրությունների համատարած ներդրումը: Չայնի ճանաչումը նույնպես կարող է թափ հավաքել՝ շնորհիվ «բանական» շինությունների կառուցման խոշոր ծրագրերի իրացման:

Հիմնական կանխատեսումները հանգեցնում են նրան, որ մոտ ապագայում անվտանգության ապահովման ոլորտում առյուծի բաժինը կգրադեցնի կենսաչափական սարքերի ներդրումը: Ահաբեկչության դեմ պայքարը կպահանջի այս բնագավառում ցանկացած ձեռքբերման գործնական կիրառություն:

Մուլտիմեդիոն ու թվային տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը և հետզհետե դրանց ավելի մատչելի դառնալը հնարավորություն է տալիս մշակել և ներդնել նույնացման սկզբունքորեն նոր համակարգեր:

Կենսաչափական որոշ տեխնոլոգիաներ ներկայումս մշակման փուլ են անցնում, որոնցից մի քանիսը համարվում են հեռանկարային՝

- ❖ դեմքի ջերմագրումը ինֆրակարմիր ընդգրկույթում.
- ❖ ԴՆԹ բնութագրերը.
- ❖ մատների մաշկի սպեկտրադիտումը (սպեկտրազննումը).
- ❖ ափերի դրոշմները.
- ❖ Ականջախեցիների ձևերը:

Մատնադրոշմում: Ճանաչման այս մեթոդը ամենատարածվածն է: Դրանում օգտագործվում է յուրաքանչյուր մարդու համար բնորոշ մատների մաշկապտկիկային նախշերի անհատականությունը: Այն փոխակերպվում է

թվային կողի և համադրվում նախապես ներբեռնված ձևանմուշների հետ:

Նույնականացման գործընթացը տևում է մի քանի վայրկյանից ոչ ավելի: Ինչ-որ չափով անկատար լինելը, որը հետ է պահում այս մեթոդի զարգացումը, պայմանավորված է առանձին մարդկանց նախապաշարվածությամբ, ովքեր չեն ցանկանում իրենց մատնանախշերի մասին տեղեկություններ թողնել: Սարքավորումը մշակողների հակափաստարկը կայանում է նրանում, որ մաշկպատկիկային նախշի մասին տեղեկատվությունը չի պահվում, այլ պահվում է միայն նույնականացման հակիրճ կողը, որը կազմվում է ըստ մատնադրոշմի և թույլ չի տալիս վերականգնել նախշը համեմատման համար:

Այս մեթոդի առավելությունը կայանում է օգտագործման պարզության, հարմարավետության և հուսալիության մեջ: Գնալով այն տարբեր երկրներում, տարբեր կիրառություն է գտնում: Այսպես՝ Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում, խոշոր հանրախանութներում գնումներ կատարելուց հետո մարդիկ պարտավոր են իրենց մատնադրոշմը թողնել տեսածրիչի (սկանավորման սարքի) վրա (առանձին ապրանքատեսակների համար սահմանված քանակական սահմանափակումը վերահսկելի դարձնելու համար): Ֆրանսիայի մի քանի քաղաքներում հազարավոր մարդիկ կամովին մասնակցում են մի ծրագրի փորձարկմանը, որի էությունը առանց վճարման քարտեր օգտագործելու ծառայությունների դիմաց վճարելն է (բավական է մատը հպել տեսածրիչին (սկանավորման սարքին), եթե սակայն այն 2մ-ից ավել հեռու չէ): Ռուսական խոշոր բանկերը պլանավորում են առաջիկա երկու տարիների ընթացքում ներդնել հաճախորդների նույնացման կենսաչափական ծրագիր: ՋԼՄ-ների հաղորդմամբ (օրինակ, «Մոսկվա 24») ներկայումս աշակերտների համար մշակվում է մի ծրագիր, որը երեխաներին թույլ կտա ուսումնական հաստատություններում ճաշի դիմաց վճարել ավի հասարակ սեղմումով տեսածրիչին (սկանավորման սարքին):

Կարելի է կանխատեսել այս մեթոդի էլ ավելի արագ ու լայն տարածում, եթե հաշվի առնենք, որ ճապոնացի գիտնականներին հաջողվել է ստեղծել մատի անմիջական հպում չպահանջող տեսածրիչներ (սկանավորող սարքեր)<sup>3</sup>:

<sup>3</sup> [http://www.m24.ru/videos/106247?utm\\_source=CopyBuf](http://www.m24.ru/videos/106247?utm_source=CopyBuf),  
<https://www.youtube.com/watch?v=I6BA60FFQk>

Նույնացումն ըստ ձեռքի ձևի: Այս վիճակագրական մեթոդը հիմնված է ձեռքի դաստակի ձևի չափագրման վրա: Միաժամանակ այն հանդիսանում է մարդուն բնութագրող կենսաչափական բացառիկ մեծություն: Հատուկ սարքը հնարավորություն է տալիս ստանալ դաստակի եռաչափ տեսքը: Արդյունքում ստանում են չափումներ անձի նույնականացման բացառիկ թվային կոդի ստեղծման համար:

Նշված մեթոդը իր տեխնոլոգիայով և ճշգրտությամբ համադրելի է մատնադրոշման միջոցով նույնականացմանը, չնայած որ բուն սարքը մեթոդի իրացման համար մեծ տարածություն է զբաղեցնում: Չափազանց փոքր է ձեռքի միատեսակ կառուցվածք ուեցող երկու նույնական դաստակների գոյության հավանականությունը, չնայած որ տարիքի հետ ձեռքերը փոխվում են:

Վավերականացումն ըստ ծիածանաթաղանթի: Այս մեթոդի հիմքը հանդիսանում է աչքի ծիածանաթաղանթի վրա եղած նախշի բացառիկությունը: Մեթոդի իրացման համար անհարաժեշտ է բավարար լուսաչափով ֆոտոդիցիվ՝ աչքի պատկերը ստանալու համար, և հատուկ ծրագրային ապահովում՝ ստացված պատկերից ծիածանաթաղանթի վրա եղած պատկերը առանձնացնելու համար: Դրանով էլ հենց կազմվում է թվային այն կոդը, որը ծառայում է անձի նույնականացման համար:

Տեսածրիչների (սկաներների) արժանիքը կայանում է նրանում, որ մարդուց չի պահանջվում հայացքը սևեռել մի կետի, քանի որ ծիածանաթաղանթի բծերի նմուշօրինակը կենտրոնացած է աչքի մակերեսին: Տեսածրումը (սկանավորումը) հնարավոր է մինչև 1մ հեռավորությունից: Դա հարմար է օգտագործան համար, օրինակ՝ բանկոմատների դեպքում:

Նույնացումն ըստ ցանցաթաղանթի ուրվանկարի: Ցանցաթաղանթները տեսաձևավորվում են (սկանավորվում են) ցածր հաճախականության ինֆրակարմիր լույսի օգնությամբ, որը բիբի միջով ուղղվում է դեպի աչքի հետին պատի մկանները: Ցանցաթաղանթների տեսածրիչները (սկաներները) լայն տարածում ունեն գաղտնի օբյեկտների թույլտվության համակարգերում, քանի որ դրանցում մուտքի սխալ թույլտվության դեպքեր գրեթե չեն լինում: Միալնեքը կարող են բացատրվել գլուխը ստուգաչափային դիրքից շեղելով և հայացքը լույսի աղբյուրի նկատմամբ ոչ ճիշտ ֆոկուսավորմամբ:

Անգամ երկվորյակների մոտ ցանցաթաղանթների մազանոթային պատկերները տարբերվում են: Այսպիսի համակարգի թերություն կարելի է հա-



մարել հոգեբանական գործոնը՝ ամեն մարդ չէ, որ կարող նայել մութ բացվածքի մեջ, որտեղ աչքի մեջ ինչ-որ բան է լուսավորում: Բացի այդ այսպիսի համակարգերը զգայուն են ցանցաթաղանթի նյարդային կողմնորոշման հանդեպ, դրա համար էլ հարկավոր է ուշադիր հետևել, թե ինչպիսին է աչքի դիրքը բացվածքի նկատմամբ:

Ղեմքի ձևը որպես նույնացման օբյեկտ: Նույնացման այս վիճակագրական մեթոդի էությունը կայանում է մարդու դեմքի երկչափ կամ եռաչափ պատկերները կառուցելու մեջ: Ֆոտոխցիկով և մասնագիտացված ծրագրային ապահովմամբ դեմքի պատկերի վրա ընգծվում են աչքերի, շուրթերի, հոնքերի, քթի և մյուս մասերի ուվագծերը: Այնուհետև հաշվարկում են այդ տարրերի միջև եղած հեռավորությունը և բնութագրական մեծությունները: Այդ տվյալներով կազմվում է արտաքին պատկերը, որը համեմատման համար փոխակերպվում է թվային տեսքի:

Այս մեթոդը դասվում է արդյունատու կենսաչափության առավել դինամիկ զարգացող ուղղություններից մեկը: Դրա գրավչությունը հիմնված է այն բանի վրա, որ հատուկ, թանկարժեք սարքավորումներ չի պահանջվում: Բավական է տեսախցիկի և անհատական համակարգչի առկայությունը: Բացի այդ բացակայում է սարքավորումների հետ ֆիզիկական հպումը: Կարիք չկա դիպչել որևէ բանի կամ դադար առնել՝ հատուկ սպասելով համակարգի գործադրմանը:

Որպես կենսաչափական ժամանակակից եղանակ սրտի զարկերով անձի նույնացումը: Բացառիկ է նաև սրտի կծկումների պարբերականությունը: Այն, ինչպես մտնադրոշմը, գործնականում կրկնության չի ենթարկվում: Ժամանակակից ֆիթնես-ապարանջանները ունակ են ճանաչել (տարբերակել) էլեկտրոկարդիոգրաֆիական ազդանշանները: Որոշ արտադրողներ իրենց սարքերի համար արդեն լուրջ հեռանկար են տեսնում բանկային հեռահար սպասակման ոլորտում:

Այսպես՝ կանադական արտադրողներից Bionym-ը բրիտանական Halifax բանկի հետ միասին փորձարկում են Nymi ապարանջանը: Սրտի զարկերի բացառիկ ցուցանիշներն օգտագործվում են բանկային հեռահար սպասակման համացանցային ծրագրեր մուտք ունենալու համար:

Գրչագիր ձեռագրով ճանաչելը: Ձեռագրի միջոցով անձի նույնացման համար հիմք է ծառայում յուրաքանչյուր մարդու համար այդ գործոնի կայու-

նությունը և բացառիկությունը (եզակի լինելը): Բնութագրական հատկանիշները չափվում և փոխարկվում են թվային տեսքի, ապա ենթարկվում համակարգչային մշակման: Այսինքն՝ համեմատման համար ոչ թե ընտրում է գիրը՝ որպես արդյունք, այլ գրելու բուն գործընթացը:

Տարածված է տվյալների մշակման երկու մեթոդ՝ ա) նմուշի հետ սովորական համեմատում, բ) դինամիկ վերահսկում (վերահսկիչ-չափիչ հատուկ սարքի օգնությամբ (վերիֆիկատոր)): Առաջինը հուսալի չէ, քանի որ ստորագրությունը միշտ չէ որ միատեսակ է: Ադպիսի մեթոդը հանգեցնում է բարձր տոկոսով սխալների: Դինամիկ վերահսկման էությունը կայանում է ավելի բարդ հաշվարկների մեջ: Այս մեթոդով հաշվառվում են կոնկրետ ժամանակահատվածում ստորագրության կատարման գործոնները՝ տարբեր հատվածներում ձեռքի շարժման արագությունը, ճնշման ուժը և երկարատևությունը ստորագրման տարբեր փուլերում: Դա բացառում է կեղծումը, քանի որ հնարավոր չէ ճշտությամբ կրկնօրինակել ստորագրության հեղինակի ձեռքի շարժումները:

*Ստեղնաշարային ձեռագրով ճանաչելը:* Այս մեթոդը ընդհանուր առմամբ նման է վերը նկարագրածին, սակայն այս դեպքում ստորագրությունը փոխարինվում է որևէ կողավորված բառով, իսկ որպես սարքավորում՝ հարկավոր է միայն սովորական ստեղնաշարը: Նույնացման հիմնական բնութագիր է հանդիսանում գաղտնաբառի ստեղնաշարային հավաքման դինամիկան:

Ժամանակակից հետազոտությունների համաձայն՝ ստեղնաշարային ձեռագիրը օժտված է որոշակի կայունությամբ, ինչի շնորհիվ կարելի է միանշանակ նույնացնել անձին: Դրա համար ելակետային տվյալներ են համարվում ստեղները սեղմած պահելու և սեղմելու միջև ընկած ժամանակը: Ընդ որում ստեղները սեղմելու միջև ընկած ժամանակը բնութագրում է աշխատանքի տեմպը (թափը), իսկ սեղմած պահելու ժամանակը՝ աշխատելու ոճը, այսինքն՝ սահուն սեղմելը կամ կտրուկ հարվածելը:

Սկզբում՝ գտման (ֆիլտրացման) փուլում, հեռացվում են «ծառայողական»՝ գործառնական (ֆունկցիոնալ), նշորդ և այլ ստեղների մասին տվյալները: Այնուհետև առանձնացվում են օգտագործողի հետևյալ բնութագրերը՝ ա) տեքստ հավաքելու ընթացքում թույլ տված սխալների քանակը, բ) ստեղները սեղմելու միջև ընկած ժամանակը, գ) տեքստը հավաքելու արագություն-

նր, դ) ստեղծ սեղմած պահելու տևողությունը, ե) ռիթմի խանգարումը տեքստը հավաքելիս:

Ձայնով ճանաչելը: Ձայնի նույնացման կենսաչափական մեթոդը հարմար է կիրառման համար: Դրա ներդրման պատճառ է հանդիսանում հեռախոսային ցանցերի լայն տարածումը և համակարգիչներում միկրոֆոնների ներտեղադրումը: Թերություն է համարվում անձի նույնացման ընթացքում առանձին գործոնների բացասական ազդեցությունը ճանաչման գործընթացի վրա՝ միկրոֆոններում առաջացող խանգարումները, շրջապատող աղմուկները, արտասանության ընթացքում (առողջանության մեջ) թույլ տված սխալները, մարդու տարբեր հուզական վիճակները և այլն:

Ձայնով վավերականության (բնագրաբնությունության) պարզման համար մշակվող սարքերում գլխավորը ձայնի անհատականությունը առավելագույն չափով բնութագրող մեծությունների (պարամետրերի) ճիշտ ընտրությունն է: Ձայնագրանշանների այդ պարամետրերը կոչում են անհատականության հատկանիշներ: Այդպիսի հատկանիշները, բացի ձայնի առանձնահատկության մասին տվյալներից, պետք է ունենան նաև այլ հատկություններ: Օրինակ՝ դրանք պետք է հեշտ չափվեն և քիչ կախված լինեն աղմուկից ու խանգարումներից: Բացի այդ՝ դրանք պետք է ժամանակի որոշակի հատվածի համար օժտված լինեն կայունությամբ և դիմադրեն նմանակումներին:

Ներկայումս մշակել են ձայնի՝ դիմախաղի հետ համակցված (զուգակցված) վերլուծության մեթոդի կիրառմամբ համակարգեր: Պարզվում է, որ խոսողի դիմախաղը բնորոշ է միայն իրեն և բոլորովին այլ կլինի, եթե նույն բաները արտաբերի մեկ այլ անձ:

*Ղեմքի զարկերակների և երակների ջերմագրական դիտարկումը:*  
 Ղեմքով անձի նույնացումը կվերածվի զգալիորեն պարզ գործընթացի, եթե անցում կատարվի լույսային ճառագայթների ինֆրակարմիր ընդգրկույթին: Նույնացվող դեմքի ջերմագրումը ի հայտ է բերում մաշկը արյունով մատակարարող զարկերակների դասավորվածության բացառիկությունը դեմքի վրա: Այդպիսի կենսաչափական սարքերի համար լուսավորման խնդիր չի առաջանում, քանի որ դրանք ընկալում են միայն դեմքի ջերմային տատանումները և լույսի կարիք չունեն: Ճանաչման արդյունավետությունը կախված չէ դեմքի գերտաքացումից կամ չափից ավելի սառելուց, պլաստիկ վիրահատությունից, քանի որ դրանք չեն փոխում անոթների ներքին դասավորությունը:

Դեմքի ջերմագրման եղանակը թույլ է տալիս տարբերել երկվորյակներին, որոնց դիմային արյունատար անոթները խիստ տարբերվում են: Նույնացման այս եղանակի համար անհրաժեշտ է ունենալ հեռահար ինֆրակարմիր ընդգրկույթ ունեցող մասնագիտացված տեսախցիկ:

*Ձեռքի երակներով անձի նույնացումը:* Արդեն շրջանառվում են կենսաչափական հատկանիշների վերլուծության հիման վրա գործող սարքեր, որոնց աշխատանքի հիմքում ձեռքերի վրա երակների անհատական դասավորությունն է: Ռիշադրության կենտրոնում են դաստակի թիկունքային կողմում դասավորված երակների պատկերները, որոնք արտահայտվում են ձեռքը բռունցք սեղմած վիճակում: Երակների պատկերների հետազոտումն իրականացնում է հեռուստախցիկը՝ ինֆրակարմիր ճառագայթներով լուսավորելու պայմաններում: Ընդգծված (նկատելի դարձած) երակների պատկերը ներբեռնելիս իրականացվում է դրա երկակիացում: Այդպիսի սարքավորումներ արտադրող միակ ֆիրման անգլիական Vinchek-ն է:

*Մատնահետքերի հայտնաբերման դետեկտոր (դրսկորիչ):* ԱՄՆ-ում վաճառքի է հանվել նորարարական տեխնիկա, որը հնարավորություն է տալիս տեսանելիացնել գնդակի վրա եղած մատնահետքերը:

Դատական բժշկության ամբիոնի դասախոս, դոկտոր Ջոն Բոնդը քրեաբանության ամբիոնի դասախոս Լիզա Սմիթի հետ միասին իր հայտնագործության համար տեսական հիմքեր է ստեղծել դեռևս 2008-2009թթ., երբ այն Time Magazine ամսագրի վարկածով ընդգրկվեց 50 լավագույն հայտնագործությունների շարքում, BBC Focus պարբերականի վարկածով անվանվեց «հայտնագործություն, որը կփոխի աշխարհը», իսկ դոկտոր Բոնդը պարզևատրվեց Բրիտանական կայսրության շքանշանով:

Սկսած 2013թ-ից՝ նորարարական տեխնոլոգիան վերածվեց պրակտիկ սարքի, և առաջին նմուշահատերն իջան հոսքագծից:

Դոկտոր Բոնդը, համագործակցելով Լեստերի համալսարանի հետ, գտավ մի մեթոդ, որի օգնությամբ կարելի է տեսնել մատնահետքերը մետաղների և հատկապես պարկուճների վրա, եթե անգամ դրանք մաքրվել (ջնջվել) են:

Կրիմինալիստիկայում մատնահետքերն օգտագործվում են արդեն 100 տարուց ավելի: Դա մատների բարձիկների վրա եղած մաշկապտկիկային գծերի նախշապատկերներով անձի նույնացման պարզ և հասկանալի մեթոդ է: Եթե ձեռքով դիպչենք որևէ մակերեսի, ապա դրա վրա քրտնաճարպային

հետք կմնա, որը կարելի է ֆիքսել՝ մշակելով հատուկ քիմիական պատրաստուկով: Բայց նախկինում՝ մինչև դոկտոր Բոնդի և նրա պաշտոնակիցների հետազոտությունները, կարելի էր պարզապես մաքրել մատնահետքերը, և հատակ արտացոլվածք ստանալը գործնականում դարձնել անհնար: Այնինչ նոր մեթոդը հնարավորություն է տալիս օգտագործել ժանգահարված հետքերը, որոնք թողնվել են մարդու ձեռքի ափամասում մշտապես առկա քրոնաճարպից այն մետաղների հետ հպման մեջ մտնելուց հետո, որոնց ձեռք է տվել հանցագործը: Հետազոտողները մետաղը պատում են որոշակի տեսակի փոշիով և 2500վտ լարում հաղորդում՝ ստիպելով փոշուն կպչել մետաղի վնասված մասերին: Այն հատվածներում, որտեղ թողնվել են մատնահետքերը, տեղի է ունենում մետաղի քայքայում (կոռոզիա) առաջ բերող քիմիական ռեակցիա, որի արդյունքում ցայտուն կերպով արտահայտվում են մաշկապտիկային գծերի ձևավորած նախշապատկերները: Երևույթը շատ նման է քիմիական լուծույթի ներգործության պայմաններում լուսանկարչական ժապավենի վրա պատկերի ի հայտ գալուն: ԵՎ էլի մի զարմանալի հանգամանք. հետազոտելով կրիմինալիստիկական այս մեթոդի ֆիզիկաքիմիական ռեակցիաների մեխանիզմները՝ գիտնականները եկել են այն եզրահանգման, որ մատնահետքերը կարող են պահպանվել ոչ միայն կրակված պարկուճի, այլ նաև փողից դուրս նետված գնդակի վրա:

Նորարարությունը պատենտավորվել է ոստիկանական մարմինների կողմից, որոնք էլ իրավունք են ստացել արտադրել, գովազդել և վաճառել մատնահետքերի էլեկտրաստատիկական վերականգնման և վերլուծության (CERA) քարտրիջները: Դոկտոր Բոնդը, որ շարունակում է սերտ կապ պահպանել ուժային կառույցների հետ, ասել է. «Ես նախկինի պես շարունակում եմ սերտ կապ պահպանել այս մտահաղացումը ներդրած խմբի հետ և գիտական օժանդակություն եմ ցուցաբերում: Վերջերս որպես փորձագետ՝ Կալիֆոռնիայի դատարանում ցուցմունք էի տալիս թեսթի (CERA) արդյունքների շուրջ: Այս սարքով ստացված տվյալները, հասնելով դատարան, ճանաչվեցին որպես իրեղեն ապացույցներ: Դա արտացոլում է այն փաստը, որ մատնահետքերի հայտնաբերման նոր եղանակը ձախողված և իրական կյանքում իր տեղը չգտած մերկ գիտական տեսություն չէ, այլ նորարարություն, որն ապացուցել է իր օգտակարությունը»<sup>4</sup>:

<sup>4</sup> <http://www.coders-library.ru/news-view-278.html>

«Միկրոսի» սիլիկոնային մեկուսախառնուրդի օգտագործումը դատաձգաբանական նույնականացման հետազոտությունների համար: Մինչ վերջերս էլ դատաձգաբանական փորձաքննությունների առավել բարդ տեսակներից էր համարվում կրակված գնդակներով և պարկուճներով ձեռքի հրազենի նույնացմանն ուղղված հետազոտությունների իրականացումը: Շողյուն (փայլատակող, ցոլարձակող), գլանաձև մակերեսները և պարկուճի հրապատիճի վրա զարկանի հետքի գոգավոր մակերևույթները օպտիկական միկրոսկոպիական հետազոտությունների համար բավականին բարդ են: Միաժամանակ դատական ձգաբանության համար արդիական է համարվում պահպանման և փորձագիտական ստորաբաժանումներին տրամադրելու համար հետքերի պատճենները ստանալու հիմնախնդիրը: ԵՎ ահա 2014թ. խնդրի լուծման նոր ճանապարհ առաջակեց ՌԴ Մարատովի Ն.Գ. Չերնիշևսկիի անվան ազգային հետազոտությունների պետական համալսարանի նյութագիտության, տեխնոլոգիաների և որակի կառավարման ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Օ.Ռ. Մատովը:

Հիմք ընդունելով այն փաստը, որ դատական հեքաբանությանը բավականաչափ վաղուց հայտնի են սիլիկոնային միացություններ, որոնց օգնությամբ կարելի է շատ բարձր լուծաչափամբ ծավալային ձեփապատճեններ ստանալ, Օ.Ռ. Մատովը գիտական խորհրդի քննարկմանն ու հավանությանն է ներկայացրել հրազենի գործադրման հետքեր կրող կրակված գնդակների և պարկուճների մակերևույթների առանձին հատվածներից ծավալային ձեփապատճենների ստացման փորձարարական արդյունքները:

Հետք ընդունող մակերևույթից ծավալային ձեփապատճեն ստանալու համար նախապես հարկավոր է 10:1 հարաբերակցությամբ խառնել հավաքածուի մաս կազմող մածուկը և պնդարարը: Ստացված խառնուրդը բարակ շերտով տարածել կրակված պարկուճի հատակի կամ գնդակի տանող մասի վրա: Տարածած մեկուսախառնուրդը սենյակային ջերմաստիճանում 30 րոպե չորացնելուց հետո ստացված ձեփապատճեն անջատել հիմքից: «Կարծրացած» ձեփապատճենը հարկավոր է տեղավորել նպատակային օգտագործման համար պիտանի՝ բարակ, հարթ ապակու տակ և լուսանկարել «MCP-1» մանրադիտակի օգնությամբ: Գնդակի մակերևույթի և դինամիկական հետքի վրա եղած հետագծերը համեմատվում են կիսաթափանցելի լուսանկարչական պատկերները ADOBE PHOTOSHOP խմբագրիչով համադրելով:

Հարկ է նշել, որ եթե մեկուսախառնուրդի պահպանման ժամկետը չի ավարտվել (փաթեթը բացելու օրվանից 12 ամիս), ապա բավականաչափ հեղուկ խառնուրդը գործնականում առանց լրացուցիչ ճնշում հաղորդելու ինքնահոս կերպով ներհոսում է ցանկացած ճեղք, ինչը «ՄԻԿՐՈՍԻԼ»-ի օգտագործումը դարձնում է չափազանց պարզ և հարմար: Ստացված պատճենները առանց որևէ փոփոխության պահվում են երկար ժամանակ (ինչքան հարկավոր կլինի):

Մեր կարծիքով կարևոր են հատկապես մի քանի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս հետքերի պատճենների այս եղանակը ճանաչել որպես բավականաչափ հեռանկարային հույնացման հետազոտությունների համար.

✓ զարկանի հետքերը դառնում են «ուռուցիկ» (կորնթարդ), ինչը հեշտացնում է լուսավորության ընտրությունը, ինչպես նաև լուսանկարչական պատկերի որակը կախվածության մեջ չի դնում լուսավորման եղանակից.

✓ գնդակի կողային մակերեսների վրա եղած ծավալային հետքերը կարելի է «փռել» դարձնելով տափակ մակերես, ինչը հնարավորություն է տալիս ազատվել ցուլարձակումներից, որն անխուսափելի է շողյուն գլանաձև մակերեսների համար.

✓ «ՄԻԿՐՈՍԻԼ» մեկուսախառնուրդի օգնությամբ պատճենահանման ընթացքում ստացվող լուծաչափությունը այնքան բարձր է, որ գործնականում պատճենը դարձնում է բնօրինակից չտարբերվող:

*Ֆին ոստիկանները մոծակի մարմնում հայտնաբերել են հանցագործի ԴՆԹ-ն:* Ֆիննական ոստիկանության աշխատակիցները կարողացել են պարզել ավտոմեքենան առևանգողին մոծակի «պահպանած» արյան նմուշով:

Նմուշից անջատված ԴՆԹ-ն համընկել է հաշվառման մեջ գտնվող հանցագործներից մեկի ԴՆԹ-ի հետ: Հետախուզվող ավտոմեքենան առևանգվել է մայրաքաղաք Հելսինկիից 380կմ հեռու գտնվող Լապուա քաղաքից: Որոշ ժամանակ անց այն հայտնաբերվել է առևանգման տեղից 25կմ հեռու Սեյնյայոկի քաղաքի երկաթգծի կայարանի տարածքում: Մեքենայի գննության ընթացքում ոստիկանները նկատել են սրահում թռչող մոծակի: Միջատի որովայնապարկի տեսքից իրավավապահները հետևություն են արել, որ մոծակը քիչ առաջ խայթել է ինչ որ մեկին և ուղարկել են լաբորատոր հետազոտման: S-

ղամարդը՝ ում ԴՆԹ-ն համընկել է մոծակից «ստացված» ԴՆԹ-ի հետ ընդունել է մեղքը: Ոստիկանները նշել են, որ միջատների օգտագործման հնարավորության մասին տեղեկացել են դեռևս ուսումնառության ընթացքում: Իհարկե դա հնարավոր է միայն դեպքի վայրի մանրակրկիտ զննության շնորհիվ՝ ավելացրել են իրավապահները<sup>5</sup>:

*Այսուհետ անձի գտնվելու տեղը կարելի է պարզել նրա մազի մրջյունով:*

Մեթոդի հիմքում մարդու մազերի մեջ պարունակող ջրածնի և թթվածնի իզոտոպների միջին մակարդակն է: Իզոտոպների մակարդակը փոփոխվում է աշխարհագրական դիրքի փոփոխությանը համապատասխան: Դրա պատճառը խմելու ջրի տարբերությունն է՝ գրում է **Physorg**-ը:

Յուտա նահանգի համալսարանի գիտնականները դեռևս 2008թ-ին ստեղծել են հանցավորության դեմ պայքարի նոր մեթոդ, համաձայն որի մարդու մազի օգնությամբ կարելի է որոշել այն վայրի ընդհանուր տեղականումը, որտեղ մարդը հեղուկ (ջուր) է խմել: Դա ոստիկանությանը կարող է օգնել հետամուտ լինել հանցագործի կամ տուժողի տեղաշարժին: Նոր վերլուծական (անալիտիկ) մեթոդը կարող է նաև չափազանց օգտակար լինել հնեագետների, մարդաբանների և բժիշկների համար:

«Մենք խմելու ջրում և մազերի մեջ ջրածնի իզոտոպների մակարդակների էական տարբերություններ ենք հայտնաբերել, որոնք անմիջականորեն կապ ունեն ԱՄՆ-ի այն վայրի հետ, որտեղ ապրում է մարդը: Ոստիկանությունն արդեն կիրառում է այս մեթոդը», - ասել է հետազոտող խմբի ղեկավարի պաշտոնակից՝ Էկոլոգ Ջիմ Էլեռինգերը (**Jim Ehleringer**):

Հետազոտությունների ընթացքում պարզվել է, որ սերտ կապ գոյություն ունի մարդու մազերի մեջ և խմելու ջրում ջրածնի և թթվածնի իզոտոպների մակարդակների միջև, որը նա օգտագործում է: Մարդու մազերում իզոտոպների մակարդակի փոփոխականության 85%-ը անմիջական կապ են ունեցել այն տարածքի խմելու ջրի իզոտոպների մակարդակի փոփոխականության հետ, որտեղ գտնվել է կոնկրետ անձը: Ընդամենը մեկ մազը կարող է օգնել վերջին մի քանի շաբաթների, կամ անգամ տարիների ընթացքում մարդու գտնվելու վայրը ճշգրիտ պարզելու հարցում, եթե դա թույլ կտա մազի երկարությունը:

<sup>5</sup> <http://lenta.ru/news/2008/12/22/mosquito/>



## ՆՈՐՐ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅՈՒՄ

### Ալեքսանյան Բենիամին

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի*

*խրավագիտության ֆակուլտետի*

*ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,*

*ոստիկանության փոխգնդապետ*

Գիտատեխնիկական զարգացման աննախադեպ տեմպերը տպավորիչ արդյունքներ են ապահովում մարդկանց ապացուցողական նշանակություն ունեցող տարատեսակ օբյեկտների նույնացման համար: Առանձնանում են հատկապես կենսաչափական պարամետրերով, ԴՆԹ բնութագրով անձի նույնացման մեթոդները: Վերջիններս, ավանդական մեթոդների հետ զուգորդելով, կարելի է զգալի հաջողություններ արձանագրել հանցագործությունների բացահայտման և կանխարգելման գործում:

Ընդհանրացնելով արտասահմանյան երկրներում կատարված հետազոտությունների արդյունքները՝ հեղինակը ներկայացնում է հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն նպաստող մի շարք ժամանակակից մեթոդներ:

**Բանալի բառեր.** նույնացում, կենսաչափական պարամետր, ԴՆԹ, մատնահետք, ձեռագիր:

## НОВОЕ В КРИМИНАЛИСТИКЕ

### Алексамян Бениамин Завернович

*Доцент кафедры ОРД и криминалистики*

*юридического факультета академии*

*Образовательного комплекса полиции РА,*

*подполковник полиции*

В последние годы беспрецедентные темпы научно-технического развития предоставляют впечатляющие результаты по идентификации людей и различных объектов для предоставления доказательной базы. Особенно выделяются идентификации личности биометрическим методом и анализом

ДНК. Используя эти методы в сочетании с традиционными, можно достичь больших результатов по раскрытию преступлений и их предотвращению.

Обобщая опыт зарубежных стран, автор представляет ряд результативных методов, используемых по борьбе с преступностью.

**Ключевые слова:** идентификация, биометрический параметр, ДНК, отпечаток пальца, почерк.

## NEW IN CRIMINALISTICS

### **Alexanyan Beniamin**

*Associate Professor of the Chair of Operative  
Intelligence activity and Criminalistics of  
Law Faculty of the Academy of Educational  
Complex of Police of the Republic of Armenia,  
Police Lieutenant Colonel*

---

The unprecedented rates of scientific and technical development provide effective results, have argumentative role for different kinds of objects for the identification. There are specified, especially, the biometric parameters of identification methods with DNA characteristics. Combining them with traditional methods, we can record significant success for preventing and discovering the crimes.

Generalizing the results of researches, made in foreign countries, the author presents several modern methods for increasing the productivity of countering the crime.

**Keywords:** identification, biometric parametr, DNA, fingerprint, handwriting.

**ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ  
ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Աղայան Ռուբեն**

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների  
ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի  
Ապրանքագիտական  
փորձաքննությունների բաժնի  
փորձագետ*

**Աղայան Սարիկ**

*ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության  
այլանավորման, հաշվառման և  
վերլուծության բաժնի տեսուչ,  
տեխնիկական գիտությունների  
թեկնածու, ոստիկանության լեյտենանտ*

Դատական ավտոապրանքագիտական փորձաքննությունների կատարման բնագավառում, ավտոտրանսպորտային միջոցների վթարների կամ այլ հանգամանքներում առաջացած մեխանիկական վնասվածքների հետևանքով պատճառված վնասի չափի արժեքային մեծության որոշման համար ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի համապատասխան կառույցների կողմից մշակված և հաստատված մեկ ընդհանուր մեթոդաբանություն: Հարկ է նշել, որ ԱՊՊԱ ոլորտում ավտոտրանսպորտային միջոցների վթարների դեպքում առաջացած վնասվածքների հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ժամանակ վնասի չափի արժեքային մեծությունը որոշվում է «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL1-001 Կանոններում նշված մեթոդաբանության համաձայն: Ըստ այդ Կանոնների վնասի չափի արժեքային մեծության որոշումը կիրառելի է միայն ԱՊՊԱ ոլորտում՝ ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման ու փոխհատուցման ժամանակ, և պետք է փաստել, որ այդ Կանոններում բերված մեթոդաբանությունն էականորեն տարբերվում է դատական ավտոապրանքագիտական փորձաքննություններ կատարելիս վնասի չափի արժեքային մեծության որոշման ժամանակ կիրառվող մեթոդաբանությունից:

Ստացվում է այնպես որ, եթե անհրաժեշտություն է առաջ գալիս վնասի հատուցման նպատակով տարբեր տեսակի հատուցման համակարգերով (ԱՊՊԱ հատուցում և քաղաքացիական հայցերով հատուցում) ունենալ երկու տարբեր մեթոդաբանական հիմքերով տրված փորձագիտական եզրակացություններ, ապա հնարավոր է միևնույն վթարի կապակցությամբ երկու եզրակացությունների արդյունքները տարբերվեն միմյանցից:

Նշված խնդրից ելնելով ներկայումս ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացվում է գիտամեթոդական աշխատանքներ՝ նպատակ ունենալով վերոնշյալ խնդրին վերաբերող լուծման ուղղություններ առաջարկել՝ հիմքում ամրագրելով հետևյալ սկզբունքները.

ա) փորձագիտական հետազոտությունների արդյունքներով ապացուցողականության, ճշտության, լիարժեքության և օբեկտիվության ապահովում,

բ) ավտոապրանքագիտական դատական և ոչ դատական փորձաքննությունների կատարման ընթացքում կիրառվող միասնական մեթոդաբանության ապահովում:

Հիմնվելով տրանսպորտային միջոցների հետ կապված արտասահմանյան և հայրենական ժամանակակից փորձագիտական հետազոտությունների, վերլուծությունների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի, տրանսպորտային միջոցների վերանորոգման աշխատանքների և տրանսպորտային միջոցների ապրանքային շուկաների ուսումնասիրությունների վրա՝ իրականացվող գիտամեթոդական աշխատանքում կատարվում են կիրառական տարբեր մեթոդների վերլուծություններ, համադրումներ, ինչպես նաև համակարգվում են՝ ՀՀ-ում գործող նորմատիվ իրավական ակտերի, նորմատիվ-տեխնիկական և մեթոդական փաստաթղթերի այն դրույթները, որոնք վերաբերում են դատական փորձաքննության հարցերին և տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման կանոններին, ինչպես նաև՝ տրանսպորտային միջոցների փորձաքննության գործընթացի հետ կապված հայրենական և արտասահմանյան գործնական փորձը:

Արդյունքում, վերոնշյալ խնդրի լուծման ուղղությունները հիմնականում խարսխվում են որոշակի մեթոդաբանություններից, դրանք են.

- **USU-ի արժեքի որոշման մեթոդաբանությունը**, որով ներկայացվելու են ավտոտրանսպորտային միջոցի համեմատական և ծախսային մեթոդներով գնահատման առանձնահատկություններ, հաշվի առնելով դրա տեխնիկական վիճակը, մաշվածությունը, համալրվածությունը, արատների առկայությունը և այլն, ինչպես նաև նշված մեթոդներով ստացված արդյունքների համաձայնեցումը: Ներկայացվելու է նաև հատուկ պայմաններում իրացման դեպքում, ապալրակազմված վիճակում գտնվող, շահագործողական արատներ և անսարքություններ ունեցող USU-ի գնահատման յուրահատկությունները:

- **USU-ի վերականգնման ծախսերի որոշման մեթոդաբանությունը**, որով

ներկայացվելու են վնասված ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման-վերականգնման աշխատանքների ծավալի, պահեստամասերի արժեքների և վերանորոգման-վերականգնման աշխատանքների արժեքների որոշման մոտեցումները:

• **USU-ի պիտանի մնացած մասերի արժեքի որոշման մեթոդաբանությունը**, որով ներկայացվելու են ոչնչացման (80% և ավելի վնասի) դեպքում դրա մնացորդային արժեքի հաշվարկման մեխանիզմը, մասնավորապես՝ մնացորդային արժեքի հաշվարկման պայմանները, վնասված USU-ի պիտանի համարվող մասերի հատկանիշները, ինչպես նաև պիտանի մնացած մասերի հետ կապված փորձաքննության անցկացման ընթացակարգը:

• **USU-ի ապրանքային արժեքի կորստի որոշման մեթոդաբանությունը**, որով ներկայացվելու են որոշակի մոտեցումներ, թե ինչով է պայմանավորված ավտոտրանսպորտային միջոցի ապրանքային արժեքի կորուստը և ինչպես են կատարվում դրա մեծության հաշվարկները: Ապրանքային արժեքի կորուստը պայմանավորված է նրանով, որ ավտոտրանսպորտային միջոցների առանձին տեսակների վնասվածքների վերականգնման աշխատանքներից հետո, այն ուղեկցվում է ձևաչափական պարամետրերի, կառուցվածքային նյութերի ֆիզիկաքիմիական բնութագրերի անդարձելի փոփոխություններով, որոնք բերում են ֆունկցիոնալ և շահագործողական բնութագրերի միանշանակ վատացման, ինչի հետևանքով էլ օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել ավտոտրանսպորտային միջոցի մինչվնասվածքային տեխնիկական վիճակը:

Գիտամեթոդական աշխատանքի ընթացքում մշակվելու են նաև տարբեր կարգի ցուցումներ, տեղեկատու տվյալների աղյուսակներ, անհրաժեշտ տեխնիկական, իրավաբանական, տնտեսագիտական և գնահատման հիմնական հասկացությունների ցուցակ:

Դատական ավտոապրանքագիտական փորձաքննության առարկան՝ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի մասին փաստացի տվյալների պարզումն է. դրա պատկանելիությունը որոշակի մակնիշին և մոդելին, տեխնիկական վնասվածքների առկայությունը և բնույթը, դրանց առաջացման պատճառները, ավտոտրանսպորտային միջոցի և դրա առանձին դետալների, հանգույցների, ագրեգատների արժեքի, վերականգնողական վերանորոգման արժեքի, ավտոտրանսպորտային միջոցի ապրանքային արժեքի կորստի պարզումը՝ ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում կամ այլ հանգամանքներում:

Համադրվել և դիտարկվել են ավտոապրանքագիտական փորձաքննությունների օբյեկտները, որոնք կարող են հանդիսանալ.

- ավտոտրանսպորտային միջոցն ամբողջությամբ, դրա դետալները, հանգույցները և ագրեգատները,

- ավտոարտադրողների, ավտոսպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների, առևտրի ոլորտի ներկայացուցիչների և այլնի կողմից տրամադրված տեղեկատվությունները,

- գանգվածային տեղեկատվության միջոցների, համացանցի տվյալների, տեղեկատուների տվյալները, լուսանկարները, որոնք վերաբերվում են փորձաքննության առարկային,

- նյութերը և փաստաթղթերը, որոնք ներկայացվել են փորձագիտական հետազոտության անցկացման համար:

Դիտարկվող ավտոապրանքագիտական փորձաքննությունների և հետազոտությունների շրջանակներում կարող են լուծվել հետևյալ խնդիրները.

- փորձաքննության օբյեկտի նույնականացում (հետազոտությանը ներկայացված ավտոտրանսպորտային միջոցի մակնիշի, տիպարի (մոդելի), վերափոխության (մոդիֆիկացիայի), լրակազմության, թողարկման տարեթվի կամ արտադրության ժամանակահատվածի փաստացի տվյալների պարզում,

- ավտոտրանսպորտային միջոցի ընդհանուր տեխնիկական վիճակի կամ դրա առանձին դետալի, հանգույցի, ագրեգատի փաստացի տվյալների պարզում,

- ճանապարհատրանսպորտային պատահարի հետ կապված կամ այլ վնասվածքների արդյունքում, ավտոտրանսպորտային միջոցի վերականգնողական վերանորոգման արժեքի և տեխնոլոգիաների որոշում,

- տեխնիկական վնասվածքների ծավալի, բնույթի, առկայության և դրանց կոնկրետ իրադարձությունից առաջացման /ծագման/ առարկայի նույնականացման պարզում,

- ավտոտրանսպորտային միջոցի, դրա բաղկացուցիչների մաշվածության որոշում,

- ավտոտրանսպորտային միջոցի և դրա առանձին տարրերի շուկայական արժեքի որոշում,

- ավտոտրանսպորտային միջոցի պիտանի մնացած մասերի արժեքի պարզումը,

• ավտոտրանսպորտային միջոցի ապրանքային արժեքի կորստի որոշումը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ավտոապրանքագիտական փորձաքննություններ կատարելիս ավտոտրանսպորտային միջոցների վնասի չափի որոշման հաշվարկներ իրականացնելիս, փորձագետների կողմից ինչպես ԱՊՊԱ Կանոնների համաձայն, այնպես էլ դատական ավտոապրանքագիտական փորձաքննություններ կատարելիս վնասվածքների վերականգնման հետ կապված աշխատանքների արժեքի մեծությունը ընդունվում է սովյալ շուկայում ձևավորված համանման վերանորոգման աշխատանքների պատշաճ որակով կատարման դիմաց սովորաբար գանձվող միջին գինը, ինչը կարող է սուբյեկտիվ լինել:

Վերոգրյալից ելնելով, իրականացվող գիտամեթոդական աշխատանքում նախանշվել են այն ուղղությունները, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել՝ հիմնվելով նորմա-ժամ հասկացողության կիրառման վրա՝ աշխատանքների հնարավորինս ճշգրիտ արժեքային մեծություններ ստանալու նկատառումով: Ինչպես նաև մշակվում է մեխանիզմ, որի միջոցով ՀՀ շուկայում վերականգնման աշխատանքներ կատարելիս այդ աշխատանքների արժեքը կորոշվի նորմա-ժամի միջին արժեքի կիրառմամբ:

Ավտոապրանքագիտական փորձաքննություններ կատարելիս ավտոտրանսպորտային միջոցների վերականգնման արժեքը որոշելուց վերանորոգման աշխատանքների նորմա-ժամ արժեքը, կախված վերանորոգման աշխատանքի տեսակից, փորձագետի կողմից կարող է պարզվել ՀՀ շուկայում մատուցվող ծառայությունների միջին սակագնից ելնելով: Նորմա-ժամ արժեքը ՀՀ-ում գործող վերանորոգման ծառայություններ մատուցող այն կազմակերպությունների հաստատված սակագներից ելնելով է պարզվում, որոնք ունեն անհրաժեշտ համապատասխան սարքավորումներ, հանդերձանք և որակավորված անձնակազմ, և ովքեր կատարում են կոնկրետ մակնիշի ավտոտրանսպորտային միջոցի արտադրողի նորմատիվներին համապատասխանող անհրաժեշտ վերանորոգման աշխատանքները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գիտամեթոդական աշխատանքի նպատակն է՝ առաջարկվող մեթոդների կիրառությամբ ապահովել իրականացվող հետազոտությունների արդյունքների հիմնավորվածությունը, ճշտությունը, ապացուցողականությունը և օբյեկտիվությունը: Այն կարող է օգտագործվել:

ա) դատական ավտոապրանքագիտական փորձագետների կողմից, ովքեր ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների հետազոտություն վերականգնման, վերանորոգման և մնացորդային արժեքի որոշման նպատակով» փորձաքննություն կատարելու որակավորում,

բ) դատական փորձագետների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ժամանակ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք:
2. ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները, Երևան 2007:
3. Կանոններ RL1-001 (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ) «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» Իրավաբանական անձանց միություն, Երևան, 2017, 156 էջ:
4. Ս.Ռ.Աղայան, Ռ.Ս.Աղայան, Ա.Ա.Առաքելյան. Ավտոտրանսպորտային միջոցների ոչնչացման դեպքում դրա մնացորդային արժեքի հաշվարկման մեթոդաբանությունը: (Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր) Գիտատեխնիկական հոդվածների ժողովածու, հատոր XII, №3, Երևան 2015, էջ 517-519:
5. Судебная транспортно-трасологическая экспертиза. Москва, 1977г.
6. Махнин Е.Л., Федотов С.В. Казюлин А.С. Исследование автотранспортных средств в целях определения стоимости восстановительного ремонта и оценки. (Методические рекомендации для судебных экспертов) Теория и практика судебной экспертизы. Научно-практический журнал, М.: Наука 1(9), 2008, с.148-174) 2008.
7. Методическое руководство по определению стоимости автотранспортных средств с учетом естественного износа и технического состояния на момент предъявления (РД 37 009 015-98) издание восьмое, переработанное и дополненное. М.:«ПРАЙС-Н» 2010.
8. Махнин Е.Л., Федотов С.В. и др. Исследование автотранспортных средств в целях определения стоимости восстановительного ремонта и оценки (Методические рекомендации для судебных экспертов) М. РФЦСЭ, 2013-128с.
9. Нагайцев А.А. Исследование маркировочных обозначений легковых автомобилей зарубежного производства: ЭКЦ МВД России. М.: 1999.



**ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ  
ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Աղայան Ռուբեն**

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների  
ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի  
Ապրանքագիտական  
փորձաքննությունների բաժնի  
փորձագետ*

**Աղայան Սարիկ**

*ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության  
այլանավորման, հաշվառման և  
վերլուծության բաժնի տեսուչ,  
տեխնիկական գիտությունների  
թեկնածու, ոստիկանության լեյտենանտ*

Հոդվածում բերված է ՀՀ-ում ավտոապրանքագիտական փորձաքննությունների կատարման բնագավառում, ավտոտրանսպորտային միջոցների վթարների դեպքում կամ այլ հանգամանքներում առաջացած մեխանիկական վնասվածքների հետևանքով պատճառված վնասի չափի որոշման համար ԱՊՊԱ ոլորտում և դատական ավտոապրանքագիտական փորձաքննությունների կատարման ժամանակ կիրառվող մեթոդների տարբերությունը և դրա հետևանքով առաջ եկող խնդիրը: Նշված խնդրից ելնելով՝ հոդվածում լուսաբանվում է ներկայումս ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում այդ ուղղությամբ իրականացվող գիտամեթոդական աշխատանքների նպատակները և դիտարկվող մեթոդաբանական մոտեցումները:

**Բանալի բառեր.** ավտոտրանսպորտային միջոցներ (ԱՏՄ), մեթոդաբանություն, ԱՊՊԱ ոլորտ, մեթոդական ուղեցույց, ավտոապրանքագիտական փորձաքննություն:

---

## ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕНИЯ СТЕПЕНИ ВРЕДА АВТОТРАНСПОРТНЫХ СРЕДСТВ В РЕЗУЛЬТЕАТЕ ПОВРЕЖДЕНИЙ

**Агаян Рубен Саргисович**

*НАН РА «Национальное бюро  
экспертиз» ГНКО, эксперт отдела  
товароведческих экспертиз*

**Агаян Сарик Рубенович**

*Инспектор отдела планирования, учета и  
анализа обеспечения дорожной полиции  
Республики Армения, кандидат  
технических наук, лейтенант полиции*

---

В статье рассматриваются методологические различия в сфере выполнения автотовароведческих экспертиз при определении ущерба, нанесенного в результате аварий автотранспортных средств в области деятельности ОСАГО и судебных экспертиз, или механических повреждений, полученных при других обстоятельствах, а также как следствие, возникшее в результате этого вопроса. С учетом рассматриваемых проблем, в статье проанализированы реализуемые в настоящее время в Национальном бюро экспертиз РА научно-методические и методологические подходы по данной теме.

**Ключевые слова:** автотранспортные средства, методология, ОСАГО, методический путеводитель, автотовароведческая экспертиза.

## THE PECULIARITIES OF DETERMINING THE LEVEL OF HARM CAUSED AS A RESULT OF MOTOR VEHICLES' DEAMAGE

**Aghayan Ruben**

*NAS RA "National Bureau of Expertises"  
SNPO, Expert of Commodity Expertises  
Department*

**Aghayan Sarik**

*Inspector of the Department of Planning,  
Accounting and Analysis of the Traffic  
Police of the Republic of Armenia, PhD in  
Technical Sciences, Police Lieutenant*

---

The article discusses methodological differences in the sphere of conducting auto-commodity expertise for determining the level of harm caused as a result of

motor vehicle accidents in the field of CMTPL and forensic expertise, or mechanical damage caused as a result of other circumstances, as well as problems encountered as a consequence of it. Taking into account the discussed issues, the article analyzes the scientific methodological and methodological approaches currently being implemented on this topic in National Bureau of Expertises.

**Keywords:** motor vehicles, methodology, CMTPL, methodical guidance, auto-commodity expertise.

## ԿՐԱԿՈՑԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

### Գասպարյան Աշոտ

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»*

*ՊՈԱԿ-ի Չգաբանական փորձաքննությունների*

*բաժնի փորձագետ*

Կրակոցի հեռավորության ճիշտ որոշումը կարևոր նշանակություն ունի հրազենային վնասվածքների փորձաքննություն կատարելիս: Այն հնարավորություն է տալիս որոշ հարցեր պարզաբանել. օրինակ, կարո՞ղ էր տուժողն ինքն իրեն հասցնել նշված վնասվածքը, թե՞ այն պատճառով է մեկ ուրիշի կողմից, այդպիսով՝ հաստատելով կամ ժխտելով սեփական ձեռքերով կրակելու հնարավորությունը:

Դատաձգաբանական փորձագիտական բնագավառում ընդունված է տարբերել կրակոցի հետևյալ տարածությունները՝ ընդհուպ կրակոց, կրակոց մոտիկ տարածությունից և կրակոց հեռու տարածությունից: Ֆիքսված բոլոր տարածություններից կատարված կրակոցները բնութագրվում են իրենց առանձնահատկություններով, որոնք պետք է հաշվի առնել փորձաքննության կատարման ժամանակ: Կրակոցի հեռավորության որոշման համար անհրաժեշտ է հետազոտել լրացուցիչ գործոնների առանձնահատկությունները: Կրակոցի ժամանակ, բացի գնդակից, փողաբերանից դուրս են թռչում լիցքաթափման այլ մասնիկներ, որոնք արգելքի (մարդու մարմնի) վրա թողնում են հետքեր, նույնիսկ վնասվածքներ: Կրակոցի լրացուցիչ գործոններից են օդը, գազերը, բոցը, մուրը, վառողի հատիկները և օտար մասնիկները (քսուք, ժանգ, մետաղի ծանր մասնիկներ և այլն): Այդ գործոններն առաջանում են վառողի այրման և քայքայման հետևանքով, ուստի հիմնականում կապված են դրա քանակի ու որակի հետ: Այսպիսով՝ հրազենային վնասվածքների փորձաքննություն կատարելիս նախ այդ լրացուցիչ գործոններն օգնում են լուծելու այնպիսի կարևոր առաջադրանք, ինչպիսին է կրակոցի հեռավորության որոշումը, սակայն մյուս կողմից, այդ լրացուցիչ գործոնների հետ փորձագիտական հետազոտություններ իրականացնելը, հաշվի առնելով տվյալ գործում արդյունքների հավաստիության և ապացուցողականության կարևորությունը, բարդ է և նոր մոտեցումների կարիք ունի:

Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI)

վերահսկողության ներքո գործող փորձագիտական «Հրազեն-կրակոցի արգասիքներ» աշխատանքային խմբի նախագծի FSDS 2015 ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին 2015թ.-ին հայտ էր ներկայացվել՝ մասնակցություն ունենալու կրակոցի հեռավորության որոշման իրականացման երկու փուլից բաղկացած աշխատանքներին (Project Home /2011/ASEC/AG/2489):

Հարկ է նշել, որ ծրագրին մասնակցել են 45 տարբեր երկրների լաբորատորիաներ, որոնցից 39-ը եվրոպական լաբորատորիաներ՝ 21 տարբեր երկրներից, ներառյալ 13-ը Գերմանիայից, 4 լաբորատորիաներ՝ ԱՄՆ-ից, մեկական՝ Ավստրալիայից և Իգրայելից: Հայաստանի Հանրապետությունից Փորձաքննությունների ազգային բյուրոյի ձգաբանական փորձաքննությունների բաժինը ակտիվ մասնակցություն է ունեցել կրակոցի հեռավորության որոշման գիտամեթոդական հիմնավորումներ ունեցող փորձարարական հետազոտությունների կատարմամբ նոր տեխնոլոգիայի մշակման գործընթացին:

Իրականացվող ծրագրի շրջանակներում բոլոր երկրների մասնակից կառույցներին ուղարկված էր տարբեր հեռավորություններից կատարված կրակոցների թվով 14 քաթանից գործվածքակտորներ՝ որոնցից թվով 12-ի վրա կատարված կրակոցի հեռավորությունները հայտնի էին, իսկ թվով 2-ի վրա կատարված կրակոցի հեռավորությունները՝ անհայտ:

Ներկայացված տարբեր հեռավորություններից կատարված կրակոցների թվով 14 քաթանից գործվածքակտորների վրա կապարի մետաղացման հետքերի հետազոտության համար կիրառվել է **դիֆուզ-հպումնային** եղանակը (ՂՀԵ): Նշված հետազոտությունը կատարվել է լուսանկարչական թղթով (թուղթը նախօրոք ենթարկվել է ֆիքսման) կապարի մետաղացման հետքեր հայտնաբերելու նպատակով: Ըստ այդ մեթոդի՝ ֆիքսված ֆոտոթղթերը 3 րոպե տևողությամբ 25% քացախաթթվի լուծույթի մեջ թողնելուց հետո իրենց էմուլսիոն մակերեսով դրվել է հետազոտվող մակերևույթի վրա և 10 րոպե տևողությամբ գտնվել է մամլիչի տակ՝ ապահովելով 1կգ ուժ 1սմ քառակուսու վրա ճնշում: Այնուհետև ֆոտոթղթը մշակվել է 0,2% նատրիումի ռոդիզոնատի ջրային լուծույթով և կապարի մետաղացման հետքերը հայտնաբերվել է կարմրա-մանուշակագույն գունավորմամբ [1, 2, 3]:

Ստացված կոնտակտագրամների հայտնաձևմամբ պարզվել է.

- ներկայացված նմուշ A-ի (20-30սմ) վրա դրված կոնտակտագրամի վրա կապարի մետաղացման հետքերը հայտնաբերվեցին կարմրա-մանուշակագույն


մոտ 35մմ տրամագիծ ունեցող հոմոգեն շրջանի տեսքով, որից դուրս՝ բազմաթիվ մեծ և փոքր կետային ներդրումների տեսքով: Հատուկ պետք է նշել, որ հոմոգեն շրջանի կենտրոնում քիչ նկատելի է շրջանին տարալուծված մոտ 10մմ տրամագծով շփման շրջակողը,

- ներկայացված նմուշ B-ի (40-60սմ) վրա դրված կոնտակտագրամի վրա կապարի մետաղացման հետքերը հայտնաբերվեցին կարմրա-մանուշակագույն մոտ 10մմ տրամագծով շփման շրջակողի տեսքով, որի շուրջ՝ թույլ ինտենսիվությամբ մոտ 120մմ տրամագիծ ունեցող շրջանում բազմաթիվ մեծ և փոքր կետային ներդրումների տեսքով:


Ներկայացված նմուշ A-ի և նմուշ B-ի դեպքում ստացված կոնտակտագրամների վերլուծությունները և կատարված աշխատանքների կոնտակտագրամները, որոնք թվագրված են 702 համարի տակ, ուղարկվել են Գերմանիայի Վիսբադեն քաղաքի Դաշնային քրեական ոստիկանությունում կոորդինացնող աշխատանքային խմբին:

Կրակոցի հեռավորության որոշման փուլային արդյունքների վերլուծության ավարտին, կոորդինացնող աշխատանքային խմբի կողմից հրապարակված տեղեկատվությամբ՝ երկու անհայտ կրակոցներից իրականում նմուշ A-ն կատարվել 25սմ հեռավորությունից, նմուշ B-ն՝ 50սմ հեռավորությունից: Միաժամանակ ներկայացվել են երկու փուլերի վերլուծության արդյունքները, որոնց համաձայն, ծրագրի շրջանակներում մասնակից երկրների 45 լաբորատորիաներից թվով 17 լաբորատորիաներ ճշգրիտ որոշել են երկու անհայտ կրակոցի հեռավորությունները:

Ստորև ներկայացված գծապատկերում պատկերված են ծրագրին մասնակցած երկրների 45 լաբորատորիաներից ստացված նմուշ A-ի աշխատանքների կոնտակտագրերով որոշված կրակոցի հեռավորությունները.



Ստորև ներկայացված գծապատկերում պատկերված են ծրագրին մասնակցած երկրների 45 լաբորատորիաներից ստացված նմուշ B-ի աշխատանքների կոնտակտագրերով որոշված կրակոցի հեռավորությունները.



Ծրագրին մասնակցած երկրների 45 լաբորատորիաներից ստացված նմուշ A-ի և նմուշ B-ի համար որոշված կրակոցի հեռավորությունների համադրման արդյունքները բերված է ստորև ներկայավող աղյուսյակում.

		50ամ հեռավորությունից կատարված կրակոց					
		20-30սմ	30-40սմ	40-60սմ	60-80սմ	անարդյուք	ընդամենը
25ամ հեռավորությունից կատարված կրակոց	... 2-5սմ				1 (2.2%)		1 (2.2%)
	... 15-20սմ	2 (4.4%)	7 (15.6%)	2 (4.4%)			11 (24.4%)
	... 20-30սմ		12 (26.7%)	17 (37.8%)		12 (4.4%)	31 (68.9%)
	... 30-40սմ			2 (4.4%)			2 (4.4%)
	ընդամենը	2 (4.4%)	19 (42.2%)	1 (46.7%)	1 (2.2%)	2 (4.4%)	1 (100.0%)

Տարբեր հեռավորություններից կատարված կրակոցների հետազոտության աշխատանքներում կարևորվում է հնարավոր տեխնիկական սխալի հետևանքով ստացված արդյունքների մոտավոր գնահատման հնարավորությունը: Ինչպես երևում է կրակոցի հեռավորությունների համադրման աղյուսակից, 25ամ և 50ամ հեռավորություններից կատարված կրակոցների ճշգրիտ արդյունքներ ունեն ընդամենը 17 լաբորատորիաներ՝ մասնակիցների 37.8%-

ը, որոնց թվում ներառված են նաև ծրագրին մասնակցած «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Ձգաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետների կողմից ցուցաբերած դրական արդյունքները, ինչը հաստատվել է 30.05.2015թ. -ին տրված հավաստագրով:

Հարկ է նշել, որ ծրագրին մասնակցած երկրների շուրջ 45 լաբորատորիաներից լավագույն արդյունքներ ներկայացրած թվով 14 լաբորատորիաների քրեագետ գիտնականներ (թվով 11 տարբեր երկրներից), մասնակցել են եզրափակիչ փուլի հանդիպմանը, որի ժամանակ «Հմտության թեստ (Proficiency test) կրակոցի հեռավորության քրեագիտական որոշման FDSO 2015» ծրագրի շրջանակներում կրակոցների հեռավորությունների նմուշների վերլուծության ստացված արդյունքների հիման վրա մշակվել է ալգորիթմ, ինչն էլ ներդրվել և փորձարկվել է կրակոցի հեռավորության ավտոմատ որոշման ծրագրային նոր վեր-գործիքի միջոցով [4]:

Կատարված աշխատանքները, մշակված մեթոդի շրջանակներում, նպատակ են հետապնդել համակարգչային ծրագրի օգնությամբ ստանալ կրակոցի հեռավորությունը, որը հնարավորություն կտա փորձագետներին հետազոտության ընթացքում որոշել կրակոցի հեռավորությունը, հիմնվելով գործիքի միջոցով ստացվող հետևյալ արդյունքների վրա.


- Դեպքի վայրից ստացված հրազենի կրակոցի լրացուցիչ գործոններում կատարված մոդելի և համադրելի կրակոցների լրացուցիչ գործոններում կատարված մոդելների նկարների համեմատության հիման վրա այս գործիքն ավտոմատ կերպով որոշում է նմուշի վիճակագրական պարամետրերը:

- Որոշում է ուսումնասիրվող կրակոցի հեռավորությունը տրված համեմատելի կրակոցների միջև՝ օգտագործելով չափման անորոշությունը հաշվի առնող տրամաչափարկման (կալիբրացիայի) մոդելավորումը:

Փորձագետը օնլայն ծրագրում (տեղակայված է [www.quodata.de/sdd.php](http://www.quodata.de/sdd.php) կայքում) մասնավորեցնում է կրակոցի պարամետրերը, ինչպիսիք են հրազենը, զինամթերքը, փոխանցման միջոցը և ռեագենտը, ապա ներբեռնում դեպքի վայրից ստացված լրացուցիչ գործոններում կատարված կրակոցի մոդելի պատկերը, որից հետո ներբեռնում կամ ընտրում է համեմատելի լրացուցիչ գործոններում կատարված կրակոցների պատկերները [5]:

Ստորև ներկայացված է կրակոցի հեռավորության և լրացուցիչ գործոններում կատարված կրակոցի մոդելների համադրմամբ գնահատականների գրաֆիկական պատկերը:





Ներկայացված գծապատկերում լրացուցիչ գործոններում կատարված կրակոցի մոդելների նկարների հիման վրա կրակոցի հեռավորությունը գնահատվել է 15.8սմ՝ 12-20 սմ միջակայքում, 95% հավանականությամբ, այսինքն՝ 10 և 20սմ համեմատելի կրակոցների միջև:

Հարկ է նշել, որ կատարված հետազոտությամբ ստացված արդյունքների ճշգրտությունը կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք կարող են հանդիսանալ.

- դեպքի վայրից ներկայացված հրազենային վնասվածքի կոնտակտագրամը, որի չափորոշիչները պետք է ստացված լինեն վերը նշված մեթոդի հստակ կիրառմամբ,

- զենքի, զինամթերքի տեսակը,
- վնասված օբյեկտի նյութի տեսակը և այլն:

Վերը նշված մեթոդի կիրառությունը կարևորվում է քրեագիտական փորձաքննությունների բնագավառում հնրավորինս օբյեկտիվորեն պարզելու լրացուցիչ գործոններում իրականացված կրակոցի ճշգրիտ հեռավորությունը՝ ուղղակիորեն ազդեցություն ունենալով հրազենի կիրառմամբ կատարված հանցագործությունների բացայտման ապացուցողականության, ինչպես նաև դրանց կանխման գործում:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. "Современные методы установления дистанции (расстояния) выстрела", (Экспертная техника, выпуск 100), ВНИИ судебной экспертизы, М: 1988, 87с.
2. "Определение расстояния выстрела", (выпуск 2, РФЦ судебной экспертизы, М: 1995, 179с.
3. Weber, P., and D. Scott. Applying firearm identification procedures in the analysis of percussion caps. AFTEJ, 37 (1), 2005, p.34-44.

4. Ludwig Niewöhner, Martin Barth, Dieter Neimke, Silke Latzel, Amalia Stamouli, Bart Nys, Lawrence Gunaratnam, Kira Fries, Steffen Uhlig, Henning Baldauf. Development, design, and realization of a proficiency test for the Forensic Determination of Shooting Distances – FDSD 2015. Forensic Chemistry, 1, 2016, p. 22-30.
5. /<https://quodata.de/sdd.php/>.

## ԿՐԱԿՈՑԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

### Գասպարյան Աշոտ

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»  
ՊՈԱԿ-ի Ձգաբանական փորձաքննությունների  
բաժնի փորձագետ*

Հոդվածում դիտարկվում է մոտ տարածությունից (2սմ-200սմ) կատարված կրակոցի հեռավորության որոշման կիրառական մեթոդաբանության հարցը, ինչը կարևոր նշանակություն ունի հրազենային վնասվածքների հետազոտության և փորձաքննությունների կատարման ընթացքում: Գործող փորձագիտական «Կրակոցի հեռավորության քրեագիտական որոշման և հրազեն-կրակոցի արգասիքներ (GSR)» աշխատանքային եվրոպական խմբի FDSD 2015 ծրագրի շրջանակներում անհայտ կրակոցի հեռավորության նմուշների վրա կատարվել են հետազոտություններ՝ ավտոմատ որոշման նոր վեբ-գործիքով, որը չափանշում է ուսումնասիրվող կրակոցի հեռավորությունը՝ համեմատելի կրակոցների հեռավորությունների ընտրանքի հիմքով:

**Բանալի բառեր.** հրազեն, կրակոցի հեռավորություն, դիֆուզ-հպումնային եղանակ, մետաղացման հետքեր, քրեագիտություն:

---

## СОВРЕМЕННЫЕ СПОСОБЫ ОПРЕДЕЛЕНИЯ РАССТОЯНИЯ ВЫСТРЕЛОВ

**Гаспарян Ашот Рафикович**

*Эксперт отдела баллистических экспертиз  
НАН РА «Национальное бюро экспертиз» ГНКО*

---

В статье представлены вопросы практической реализации метода определения расстояния выстрелов, сделанных на небольшом расстоянии (2см-200см), что имеет большое значение при проведении экспертиз пулевых ранений. В рамках программы FDSO 2015 проекта, действующей рабочей европейской группы "Криминологическое определение расстояния выстрела и продукт огнестрельного-выстрела", были проведены исследования на образцах выстрела, произведенного с неизвестного расстояния с помощью автоматически определяющего нового веб-инструмента, который определяет расстояние изучаемого выстрела, основываясь на выборности сравнительных выстрелов.

**Ключевые слова:** огнестрельный, расстояние выстрела, диффузно-контактный метод, следы металлизации, экспертиза, криминологический.

## MODERN METHODS OF SHOOTING DISTANCE DETERMINATION

**Gasparyan Ashot**

*Expert of Firearms Expertises Department  
NAS RA "National Bureau of Expertises" SNPO*

---

The article discusses the applied methodology issues of determining shooting distance of shots done from close distance (2sm-200sm), which is essential in conducting expertise on bullet wounds. In the framework of FDSO 2015 program of acting European "Criminological determination of shooting distance and the products of shots" working expert group researches on the samples of shots done from unknown distance have been done with the help of a new automatically determining web-tool, which determines the distance of examined shots on the basis of the selection range of comparable shots.

**Keywords:** shooting, shooting distance, diffuse-contact method, metallization traces, expertise, criminological.

## ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

### Դավթյան Մելանյա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի  
հասարակագիտական առարկաների և հոգեբանության  
ամբիոնի դասախոս, քաղ. գիտությունների թեկնածու,  
ոստիկանության կապիտան*

Տրամաբանությունն ուսումնասիրում է մտածողության կառուցվածքը, բացահայտում մտքերի ու նրանց կապակցման այն ձևերը, որոնցով իրականացվում է ճանաչողությունը: Ձևական տրամաբանությունն ուսումնասիրում է մտքի հետևյալ ձևերը՝ հասկացություն, դատողություն և մտահանգում: Ներկա մեթոդական հոդվածում ընդգրկել ենք միայն «հասկացության սահմանման» բաժնի թեմաներ և դրանք հեշտ ընկալելի դարձնող օրինակներ, սխեմաներ և դիդակտիկ նյութեր:

Ներկայացված օժանդակ նյութերը կարող են առարկայական դարձնել իրավագիտական տեսական դրույթները, նպաստել մտածողության հմտությունների և տրամաբանության հասկացությունների ձևավորմանը և ընկալմանը:

Ձևական տրամաբանությունը նշանակություն ունի այնպիսի մասնագիտությունների համար, ինչպիսիք են մաթեմատիկական, լեզվաբանությունը և հատկապես իրավագիտությունը: Պատահական չէ, որ մաթեմատիկական ու տրամաբանությունը հաճախ համեմատում են մի կառույցի հետ, որտեղ մաթեմատիկայի հասկացություններն ու կատեգորիաներն աղյուսների դեր են կատարում, իսկ տրամաբանությունը՝ դրանք միմյանց ամրացնող շինանյութի՝ ցեմենտի դեր<sup>1</sup>:

Լեզվի և մտածողության անքակտելի կապը նույնպես հայտնի է դեռ շատ վաղ ժամանակներից: Ինչպես դիպուկ բանաձևված է տրամաբանությունը մտքի քերականությունն է, իսկ քերականությունը՝ լեզվի տրամաբանությունը: Չի կարելի ճիշտ և լրիվ պատկերացում ունենալ այն բառի մասին, առանց

<sup>1</sup> Բրուտյան Գ., Ձևական տրամաբանության դասընթաց, Եր., 1967, էջ 55, 56:

իմանալու բառի և հասկացության փոխհարաբերությունը:

Տրամաբանական կայուն գիտելիքներն անհրաժեշտ են այն մասնագիտությունների համար, որոնցից պահանջվում են անակնկալ իրադարձություններին, դեպքերին ու երևույթներին տալ հստակ ձևակերպումներ, տրամաբանական վերլուծություններ, անսխալ կողմնորոշումներ, իսկ առաջադրված հարցերին՝ արդյունավետ լուծումներ:

Հասարակական նման մեծ հնչեղություն ունեցող մասնագիտություններից, թերևս առաջինն իրավագետի՝ կիրառական իրավունք կերտողի, այն պահպանողի, ինչպես նաև իրավական դաշտում անմիջական կիրառողի մասնագիտությունն է, որը տրամաբանական հմտության կարիք ունի: Այն այնպիսի մասնագիտություն է, որի անմիջական դիրքորոշումներից է կախված հետաքննական, նախաքննական ու ավարտական գործընթացները: Այդ է հիմք տվել «Իրավաբանական տրամաբանություն» հասկացության և դասընթացի երևան գալուն<sup>2</sup>:

Քանի որ ներկա մեթոդական ուսումնասիրությունը նախատեսված է իրավաբանների ուսուցման համար ընդհանրապես, և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ունկնդիրների համար մասնավորապես, հեղինակը նպատակադրվել է տրամաբանության դասընթացի մեջ ընդգրկված ուսումնաօժանդակ նյութերն ու օրինակները վերցնել իրավագիտական պրակտիկայից: Բնականաբար, երբ գործ ենք ունենում իրավաբանական հասկացությունների, դատողությունների, մտահանգումների հետ, առնչվում ենք «Իրավաբանական տրամաբանություն»<sup>3</sup> առարկայի ոլորտի հիմնախնդիրներին ու տերմիններին: Իրավաբանական տրամաբանությունը կիրառական կոնկրետ գիտելիք է տալիս իրավագիտություն սովորող մասնագետին, որտեղ ընդհանուր տրամաբանության մեթոդները կիրառվում են մարդու գործունեության կոնկրետ այն ոլորտներում, որտեղ բխվում են իրավապահի և իրավախախտի շահերը:

Իրավաբանական գործունեությունը կապված է իրավական հարցերի

<sup>2</sup> Գ. Բրուտյան, Ձևական տրամաբանության դասընթաց, Եր., 1967, էջ 56:

<sup>3</sup> Тер-Акопов А., Юридическая логика, Учебное пособие, М., 2002, տե՛ս Ա. Д Гематова, Логика для юристов, 2014, տե՛ս նաև Ю. В. Ивлев, Логика для юристов, М. 2000, տե՛ս նաև И. В. Малахов, Логика для юристов, М. 2002. տե՛ս նաև Л.Н. Сумаркова, Юридическая логика: коммуникативная концепция, Одесса, 2015.

հստակ ընկալման և ճիշտ որոշման ընդունման հետ: Այդ որոշումները մարդու համար ունեն ճակատագրական նշանակություն, բնականաբար, պետք է լինեն ճշմարիտ, պարտադիր և օրենքին համապատասխան: Հայտնի է, որ գուտ իրավաբանական գործունեությունը բացարձակապես մտածական գործունեություն է: Ցանկացած գործունեություն կազմված է երեք բաղադրատարրերից՝ *հոգևոր*, որը որոշում է գործունեության իմաստն ու սոցիալական ուղղվածությունը:

*Դրդող՝ մոտիվացիան*, որն իր մեջ ներառում է այն պահանջմունքները, հետաքրքրությունները, իդեալները, որոնք մղում են գործունեության և *ինստելեկտուալ* բաղադրատարրի մեջ, մտնում են գիտակցության և կամքի այն դրսևորումները, որոնց արդյունքում իրագործվում է գործողությունը<sup>4</sup>: Այստեղ առաջնայինը մոտիվացիոն տարրն է: Իրավական գործունեությունն ըստ էության, ճանաչողական գործունեություն է, իսկ ցանկացած, իրավական բնույթի հասկացության ճանաչողությունն իրականացվում է հիմնականում տրամաբանական ձևով: Իրավաբանական փաստը նշանակում է ոչ միայն հայտնաբերել, այլև ճանաչել այն, բազմաբնույթ երևույթների մեջ դասակարգել, տալ տվյալ հասկացության սահմանումը: Միայն փաստի ճանաչումից հետո է այն ստանում սոցիալական և իրավաբանական իմաստ:

Իրավաբանական հասկացություններով ու դատողություններով են կազմվում իրավաբանական հիմնական նյութերը՝ փաստաթղթերը, արձանագրությունները, զեկուցագրերը, բացատրագրերը և այլն:

Անդրադառնալով հասկացության սահմանմանը՝ նշենք, որ այն այնպիսի տրամաբանական հնար է, որն օգնում է.

- բացահայտել տվյալ հասկացության բովանդակությունը՝ ընդգծելով հասկացության մեջ արտացոլված առարկայի էական հատկությունները;

- մեկնաբանել հիմնական հասկացության նշանակությունն այլ բառերի միջոցով;

- մատնանշել այն հատկությունները, որոնցով տվյալ հասկացության մեջ արտացոլված առարկան կամ երևույթը տարբերվում է մյուս առարկաներից կամ երևույթներից;

- ցույց տալ հասկացության ծագումը;

<sup>4</sup> <https://profilib.net/chtenie/7872/arkadiy-ter-akopov-yuridicheskaya-logika-2.php>

Тер-Акопов А., Юридическая логика, Учебное пособие, М., 2002.

●նշել այն փորձնական եղանակները, որի իրագործումը հանգեցնում է **հասկացության ստեղծմանը**<sup>5</sup>:

Թե կոնկրետ դեպքում ինչպես պետք է սահմանել, կախված է այն առարկայի կամ երևույթի բնույթից, որի նկատմամբ կիրառվում է տվյալ սահմանումը:

Իրավաբանական պրակտիկայում՝ դատավարական գործընթացներում որոշումների ճշմարտությունը կախված է նրանից, թե **որքանով են ճշմարիտ սահմանվում հասկացությունները**:

Իրավաբանական հասկացության ճիշտ սահմանումն ունի երկու կողմ. առաջին, թե ո՞ր սահմաններում են դեպքերը գնահատվում, որակվում, և երկրորդ՝ ո՞ր իրավական հասկացությունն է իրավաբանի կողմից կիրառվում:

Իրավական հասկացության ճիշտ սահմանման համար կարևոր է, որ այդ հասկացության բովանդակությունը համապատասխանի կոնկրետ կատարվածի հատկանիշներին, այսինքն՝ սահմաններին:

Այսպիսով, հասկացության սահմանման նպատակն է մի առարկան կամ երևույթը տարբերել մյուսներից: Օրինակ՝ «գողություն» հասկացությունը սահմանվում է որպես ունեցվածքի *գաղտնի* հափշտակություն: «Գաղտնիությունը» այն էական հատկանիշն է, որը «գողությունը» տարբերակում է հափշտակության մյուս ձևերից. «կողոպուտից», «ավագակությունից»:

Ուշագրավ է, որ «գողության» գրեթե ժամանակակից սահմանումը դեռևս տվել է Ներսես Շնորհալին՝ գրելով. «Քանի որ միայն մեծ առարկաներ կամ շատ գողացողը չէ, որ գող է կոչվում, ոչ էլ փոքր բան կամ քիչ գողացողը՝ այլ բան գող անունը և պատիժը նույնաբար տրվում է բոլորին՝ թե՛ շատ գողացողին և թե՛ քիչ: Եվ սահմանումը, որով մարդը գող է անվանվում և որպես այդպիսին ճանաչվում, ով ձեռքը երկարում է՝ որևէ իր վերցնելու, և այս ու այն կողմ է նայում, որ առարկայի տերը չտեսնի և իրեն բռնի, կամ օտարը տեսնի և հայտնի, այդպիսին գող է և արածը գողություն»<sup>6</sup>:

Տրամաբանությունը մշակել է **հասկացություն** սահմանելու որոշ հնարներ, որոնք թույլ են տալիս սահմանազատել հասկացությունները՝ պահպանելով նրանց ճշմարտությունը և համապատասխանությունը օբյեկտիվ իրականությանը:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Բրուսյան, նշվ. աշխ., էջ 110:

<sup>6</sup> Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Եր., 1991, էջ 54:

«Հանցագործ» հասկացության սահմանումն իրավաբանական պրակտիկայում կարելի է նույնացնել նույնիսկ հանցագործի բացահայտման հետ:

Օրինակ, երբ փորձում ենք գտնել հանցագործին ըստ ականատեսների նկարագրությունների ու բնութագրումների, ըստ նրանց կողմից հաղորդած հատկանիշների, համակարգչային ֆոտոռոբոտ ծրագիրն անմիջապես ներկայացնում է փնտրվող անձի հնարավոր պատկերը: Այս ճանապարհով, երբ ուրվագծվում է հանցագործի դիմագծերը կամ բացահայտվում կոնկրետ հանցագործը, տրամաբանական լեզվով կարող ենք կոչել սահմանում, այսինքն՝ հնարավոր արտահայտչամիջոցներով փորձում ենք սահմանագատել փնտրվող հանցագործին մյուս մարդկանցից:

Հանցագործի բացահայտման ինստիտուցիոնալ համակարգ է մշակել Միխիթար Գոշը: Թե ու՞մ համար է դատարանը հարցին, Գոշը պատասխանում է. «Հայտնապես բարի մարդկանց դատարան պետք չէ, պետք չէ դատարան նան ակնհայտորեն չար մարդկանց, այլ անհայտին այդ երկուսից, քանզի երբեք տեսակի բարքերով են վարվում մարդիկ՝ բարի, չար և միջակ: Ըստ այդմ էլ, դատարան պետք է նրանց, ում կասկածում են չարության մեջ»<sup>7</sup>:

Հայտնի է, որ օպերատիվ-հետախուզական աշխատանքներ կատարողներն իրենց պրակտիկայում մշտապես գտնվում են մտապատկերից դեպի հասկացություն անցման պրոցեսում: Մտապատկերը կազմվում է օբյեկտի մասին էական և ոչ էական հատկանիշների ու հարաբերությունների շրջանակներում: Այստեղ հետախուզողը կարող է առաջնորդվել իր հիշողություններով, կանխատեսումներով, կասկածներով: Օգտագործելով հասկացություններ կազմելու հնարանքները՝ համեմատությունը, վերլուծությունը, համադրությունը, վերացարկումը, ընդհանրացումը՝ հետախույզն իր մտապատկերից կազմում է իրական՝ օբյեկտիվ հասկացություններ, որոնց հիմքի վրա էլ կատարվում են իրավաբանական հետազոտությունները:

Հասկացության բազմազան և բազմաբնույթ սահմանմանման ձևերից նախ անդրադառնանք *բացահայտ և ոչ բացահայտ* սահմանմանը:

Բացահայտ սահմանումը բաղկացած է երկու մասից՝ սահմանող և սահմանվող հասկացություններից: Եթե փորձենք տալ «իրավունք» հասկացության սահմանումը, պետք է նշենք, որ այն «հասարակական հարաբերություն-

<sup>7</sup> Ռ. Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1-ին, Եր., 2001, էջ 368:



ներ կարգավորող ձևերից մեկն է»: Այստեղ «Իրավունքը» սահմանվող հասկացությունն է, իսկ «հասարակական հարաբերություններ կարգավորող ձևերից մեկը»՝ սահմանողը: Իսկ ոչ-բացահայտն այն սահմանումն է, որի դեպքում սահմանվող հասկացությունը սկզբից չի տրված: Այն ի հայտ է գալիս հետագա կշռադատությունների ընթացքում, երբ հեղինակները ցանկանում են մարդու ազնվությունը, նվիրվածությունը, բարությունը, աշխատասիրությունը, ազահությունը, չարությունը, ազատությունը, ուժը սահմանել սասցվածքների, առակների, աֆորիզմների միջոցով:

Օրինակ՝ «Ազահ մարդու համար հասարակածն իր որովայնի շրջագիծն է», «Ուժեղին է աշխարհը ճանապարհ տալիս, ուժն է ծնում իրավունքը», «Երջանկության գաղտնիքը անկախության մեջ է, իսկ անկախության գաղտնիքը՝ խիզախության»<sup>8</sup> և այլն:

Հասկացության *մերձավոր սեռի և տեսակի տարբերության* սկզբունքով սահմանումը ցույց է տալիս սահմանվող հասկացության մերձավոր սեռը: Մերձավոր սեռը ավելի լայն հասկացություն է, քան սահմանվող հասկացությունը, որը կազմում է մերձավոր սեռի տեսակներից մեկը:

Օրինակ՝ «իրավունք» հասկացությունն ընդհանուր է, այսինքն՝ իրավական նորմերի համակարգ է, որը սանկցիավորված է պետության կողմից: Այն սեռային հասկացություն է, իսկ նրա տեսակային հասկացություններից են՝ քրեական իրավունքը, վարչական իրավունքը, քաղաքացիական իրավունքը և այլն: Այս տեսակային հասկացություններին որոշ հատկանիշների ավելացման դեպքում կարող են առաջանալ նոր ենթատեսակներ:

Հասկացության գենետիկական սահմանումը ցույց է տալիս սահմանվող առարկայի ծագումն ըստ կենսաբանական առանձնահատկությունների: Օրինակ՝ «մատնադրոշմը –մատի արտաքին մակերևույթի դրոշմված հետքն է», որը կենսաբանորեն ներկայացնում է մարդու ձեռքի գծանախշերի կառուցվածքը»<sup>10</sup>: Մա գենետիկական սահմանում է, քանի որ գլխավոր հատկանիշը մատնահետքի առաջացումն է, որն ուսումնասիրվում է որպես կենսաբանական որոշակի փոխներգործության արդյունք:

<sup>8</sup> [http://www.armblog.net/2010/09/blog-post\\_21.html](http://www.armblog.net/2010/09/blog-post_21.html)

<sup>9</sup> Тер-Акопов А. А. Юридическая логика: Учебное пособие. - М.: ИКФ Омега-Л, 2002 <http://sci.house/kniga-yuridicheskaya-logika/opredelenie-delenie-obobschenie-ogranichenie-63184.html>

<sup>10</sup> ՀՄՄՀ, հ. 7

Գենետիկական սահմանման եղանակով վարույթն իրականացնող մարմինը կարող է բացահայտել հանցագործության շարժառիթները, այն կատարած անձանց դրսևորումները: Ցանկացած հանցագործություն ունի իր գենետիկ գործոնները, դրդապատճառները և այլն:

Հասկացության օպերացիոնալ սահմանումը թերևս ամենաանմիջական կայն ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի հետ, այն ցույց է տալիս անհրաժեշտ օպերատիվ այն գործողությունները, որոնց արդյունքում պարզաբանվում է սահմանվող առարկայի կամ երևույթի սահմանները: Օպերատիվ սահմանման դեպքում առաջնային են դառնում երևույթի առաջացման եղանակը, նպատակը, իրագործվում այն գործողությունները, որոնք պետք է կատարվեն երևույթի բացահայտման համար<sup>11</sup>:

«Օ2 Շաբաթաթերթի» 2016 թ. փետրվարի 12-ի համարում հրապարակված մի նյութի միջոցով փորձենք պարզել օպերատիվ սահմանման մի դրսևորում: Փետրվարի 2-ի երեկոյան բժշկական կենտրոն բուժօգնության դիմեց 42-ամյա մի տղամարդ, ով իբր ոտքի հրազենային վնասվածք էր ստացել իր կողմից պատահաբար կրակելու հետևանքով: Մարզային վարչության ծառայողները, բնականաբար, իրականացրին բացահայտմանն ուղղված միջոցառումներ /օպերացիա/, որի արդյունքում պարզվեց, որ կատարվածն ամեննին էլ ինքնավնասում չէ, այլ ուրիշի կողմից առողջությանը ծանր վնաս հասցնելու փաստ»<sup>12</sup>:

Հասկացության *օստենսիվ սահմանումն* իմացության պարզագույն ձևերից է: Այս սահմանմանը հաճախ են դիմում որևէ բան բացատրելիս՝ մատնացույց անելու միջոցով: Այստեղ սահմանվող հասկացությունը բացատրվում է առարկան ցուցադրելու, մատնացույց անելու միջոցով: Օրինակ՝ «Ո՞վ է մեղավոր երեխայի վատ դաստիարակության ու կրթության համար» հարցին, ուսուցիչներն ու երեխայի ընտանիքի անդամները բորբոքված մատնացույց են անում միմյանց»:

Հասկացության *բառային սահմանումն* այն է, որի դեպքում հասկացությունն ամբազրվում է պետական լեզվով հաստատված հայտնի բառերի, տերմինների օգնությամբ, որոնք ամբազրվում են սահմանադրություններում, օրենքներում, կանոնակարգերում և այլն: Բառերի սահմանների հստակեց-

<sup>11</sup> Տե՛ս Գ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 115:

<sup>12</sup> Օ2 Շաբաթաթերթ, 12 փետրվարի, 2016 թ, հոդ. «Պատահակա՞ն կրակոց»:

ման նպատակով են ստեղծվել իրավաբանական, տնտեսագիտական, բժշկական, լեզվաբանական և այլ բառարաններ: Հասկացության բառային սահմանման օրինակ է ՀՀ Քրեական օրենսգրքում ամրագրված եզրույթները՝ հանցագործություն, մեղք, հանցակցություն, պատիժ, համաներում և այլն:

Հասկացության *համատեքստային սահմանման* դեպքում սահմանվող հասկացության բովանդակությունը, իմաստը բացահայտ կերպով չի տրվում, միայն համատեքստում, աստիճանաբար է այն ի հայտ գալիս՝ ծառայական բառերի վերձանման օգնությամբ:

Համատեքստային սահմանումներն օգտագործվում են, մասնավորապես, որոշակի *առարկաների և երևույթների միջև հարաբերությունների իմաստը բացահայտելիս*, այդ հարաբերություններում կիրառված լեզվական որոշ կատեգորիաներ մեկնաբանելիս: Օրինակ «02 Շաբաթաթերթի»<sup>13</sup> մի հրապարակման օրինակով փորձենք բացահայտել, թե ինչպես են հորն ուղղված դատեր նամակում կիրառված ծառայական բառերը բացահայտում իրականությունը:

Ամառային մի երեկո խուզարկու Միլթոնը եղբոր հետ զրուցելիս՝ իմանում է, որ եղբոր աղջիկն իբր գնացել է Ավստրալիա: Խուզարկուն կարդում է եղբորն ուղղված նամակը, որտեղ նկարագրված է լինում Ավստրալիայի ամառային ծովափնյա եղանակի, կենցաղային ու ջայլամների, ժամանցային ծրագրի մասին, ըստ որի գնալու էին զբոսնելու Օլտ գետով:

Հետախույզն անմիջապես նկատում է, որ նամակը հորինված պատմություն է, քանի որ նամակում նկարագրված **ամառը** և **Օլտ գետը**՝ որպես ծառայական բառեր, խուզարկուին թույլ են տալիս բացահայտելու, որ եղբոր աղջիկը Ավստրալիայում չի գտնվում, քանի որ չէր կարող միաժամանակ ամառ լինել Անգլիայում և Ավստրալիայում, իսկ Օլտ գետը գտնվում է ոչ թե Ավստրալիայում այլ Ռուսինիայում:

Այսուհանդերձ միշտ չէ, որ մտածողության պրակտիկայում անհրաժեշտ է լինում դիմել սահմանումների, քանի որ առարկաներն էական հատկություններից բացի, ունեն նաև բազմաթիվ ոչ էական հատկություններ: Այդ նպատակով օգտագործվում են տրամաբանական այլ հնարներ, որոնք երբեմն փոխարինում են սահմանմանը: Այդ հնարներից են՝ նկարագրությունները, բնութագրումները, համեմատությունները և այլն:

<sup>13</sup> 02 Շաբաթաթերթ, 4 մարտի 2016թ.:

## ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

### Դավթյան Մելանյա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի  
հասարակագիտական առարկաների և հոգեբանության  
ամբիոնի դասախոս, քաղ. գիտությունների թեկնածու,  
ոստիկանության կապիտան*

Իրավաբանական պրակտիկայում որոշումների ճշմարտությունը կախված է նրանից, թե որքանով են ճշմարիտ սահմանվում հասկացությունները: Ելնելով այդ անհրաժեշտությունից՝ հեղինակն ընտրել է բացահայտ և ոչ բացահայտ, գենետիկ, ապերացիոնալ, օստենսիվ, լեզվական, համատեքստային սահմանումներ, որոնցից էլ բերվել են օրինակներ իրավական դաշտից:

**Բանալի բառեր.** տրամաբանություն, իրավաբանական տրամաբանություն, հասկացություն, սահմանում, գենետիկական սահմանում, օստենսիվ սահմանում, օպերացիոնալ սահմանում:

## ОГРАНИЧЕНИЕ ОПРЕДЕЛЕНИЯ ПОНЯТИЯ МЕТОДА ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ ЮРИДИЧЕСКОЙ ЛОГИКИ

### Давтян Мелания Хачатуровна

*Преподаватель кафедры обществоведческих дисциплин  
и психологии колледжа Образовательного комплекса  
полиции Республики Армения, кандидат политических наук,  
капитан полиции*

В юридической практике истина решений зависит от того, насколько точно они определены. Исходя из этой необходимости, автор выбрал явные и неявные, генетические, операциональные, аутентичные, лингвистические, контекстуальные определения и привел примеры каждого определения, относящегося к правовому полю.

**Ключевые слова:** логика, юридическая логика, концепция, определение, генетическое определение, аутентическое определение, операциональное определение.

## LIMITATION OF THE DEFINITION OF TEACHING METHOD IN THE CONCEPT OF LEGAL LOGIC

**Davtyan Melanya**

*Lecturer at the Chair of Social Sciences and Psychology  
of the college of Educational Complex of Police of the  
Republic of Armenia, Candidate of Political Sciences,  
Police Captain*

---

In legal practice the truth of the decisions depends on how true are defined the decisive concepts. Based on this need, the author has chosen explicit and implicit, genetic, operational, ostensible, linguistic, contextual definitions and from these definitions the author has given examples referred to the legal field.

**Keywords:** logic, legal logic, concept, definition, genetic definition, authentic definition, operational definition.

## ԶԵՆՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

### Խաչատրյան Հռիփսիմե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և  
քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,  
ոստիկանության մայոր*

Հանցավորության հակազդման գլխավոր ուղղությունը հասարակության անվտանգության, կայունության, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից պետք է հանդիսանա պետական կառավարման մարմինների, իրավապահ մարմինների, դատարանների և հասարակական կազմակերպությունների կանխարգելիչ-պրոֆիլակտիկ գործունեությունը: Այդ գործունեության հատուկ տեսակ է հանդիսանում պայքարը զենքի ապօրինի շրջանառության դեմ:

Անձի, հասարակության, պետության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է կանխարգելել զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի օգտագործմամբ կատարվող հանցագործությունները, հսկողություն իրականացնել զենքի հետ վարվելու կանոնների նկատմամբ, ինչի արդյունքում կնվազեն դժբախտ պատահարները և այլ բացասական հետևանքները: Ցանկացած պետություն՝ ունենալով այս կամ այն զինանոցը, ձգտում է իր երկրի ներսում դրա շրջանառության նկատմամբ ապահովել վերահսկողություն: Սահմանելով զենքի օրինական շրջանառության իրավական ռեժիմ՝ պետությունը պաշտպանում է իր և հասարակության ներքին անվտանգությունը: Սպառազինության իրերի մեծ կործանարար ուժը պահանջում է մշակված և որակյալ հսկողություն<sup>1</sup>: Զենքի օրինական շրջանառության նկատմամբ վերահսկողությունը՝ բռնության և հանցավորության ամբողջությամբ, արդյունավետ կանխարգելման գրավականն է <sup>2</sup>: Դրա համար

<sup>1</sup> Տե՛ս՝ Лунеев В.В. Криминологическая характеристика преступного насилия в России и мире // Насильственная преступность / Под. ред. В.Н Кудрявцева, А.В.Наумова. М.: Спарк, 1997, էջ 31:

<sup>2</sup> Տե՛ս՝ Власов Владимир Петрович. Криминологическая характеристика и предупреждение незаконного оборота оружия: Дис. канд. юрид. наук: 12.00.08: Москва, 2001 172 с. <http://lib.ua-ru.net/diss/cont/96325.html>/վերջին այցելություն 24.11.2017

պետությունը սահմանում է իրավական նորմերի մի ամբողջ համակարգ, որը կարգավորում է նշված իրերի շրջանառությունը:

Զենքի ապօրինի շրջանառության տարածվածությունն ու աճը սպառնում է ուղիղ հասարակական անվտանգությանը: Զենքի օգտագործմամբ կատարվող հանցագործության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ոչ միայն ինքնին ներկայացնում են հանրորեն վտանգավորություն, այլև խթան են հանդիսանում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների աճին<sup>3</sup>: Պրակտիկական ցույց է տալիս, որ զենքի ապօրինի շրջանառության նկատմամբ թույլ հսկողությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում բռնի, կազմակերպված, ռեցիդիվային հանցավորության և ահաբեկչության համար:

Զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի ապօրինի շրջանառությունը վտանգ է ներկայացնում օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին, քանի որ այդ առարկաները դուրս են մնում պետական վերահսկողությունից և կարող են օգտագործվել հանցավոր նպատակների համար: Զենքի ապօրինի շրջանառության հասարակական վտանգավորության աստիճանը դժվար է թերագնահատել, ինչպես և ավելորդ կրկնել պատժի անհրաժեշտությունն այս բնույթի հանցագործությունների համար<sup>4</sup>:

Զենքի ապօրինի շրջանառության քրեաբանական վերլուծությունը լիարժեք չի լինի առանց այս հարցի՝ խմբային հանցագործությունների ընդհանրապես և մասնավորապես կազմակերպված հանցավորության պայքարի համատեքստում քննարկման, քանի որ վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է զինված խմբերի քանակի աճ և բախումներ: Բացի այդ, հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի իրացման տարածվածությունը վաճառքի և հատուցման ճանապարհով պայ-

<sup>3</sup> Стu Белый И.Ю. Специально-криминологические меры предупреждения хищений оружия, боеприпасов, взрывчатых веществ и взрывных устройств в Вооруженных Силах Российской Федерации, автореферат, 2000, М.:<http://www.dissercat.com/content/spetsialno-kriminologicheskie-mery-preduprezhdeniya-khishchenii-oruzhiya-boeprizasov-vzryvch> , վերջին այցելություն 30.11.2017

<sup>4</sup> Стu Машекуашева М. X., Жашуев Р.А. О некоторых вопросах противодействия преступности / В сб.: Вопросы образования и науки: теоретический и методический аспекты. Сборник научных трудов по материалам Международной научно-практической конференции: в 11 частях. 2014.- էջ 116/116-119/

մանավորված է այն հանգամանքով, որ նշված առարկաները, հանդիսանալով գործարքի առարկա, կարող են դիտարկվել որպես ապրանք կամ ծառայություն, ունեն բարձր արժեք, ինչը հանդիսանում է խթան ոչ միայն օրինական առևտրի, այլ նաև հանցավոր գործունեության համար<sup>5</sup>:

Ձենքի ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետությունը գնահատելու և հանցավորության զարգացման հետագա հնարավոր միտումները որոշելու համար անհրաժեշտ է կատարել հանցավորության շարժի վերլուծություն: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների<sup>6</sup> ՀՀ-ում 2007-2017թթ հանցավորության այս տեսակն ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

ՀՀ քր.օր. հոդված	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
235	204	248	461	531	480	458	477	563	665	792
236	5	7	12	13	8	4	6	5	5	4
237	0	0	1	0	0	0	0	0	0	0
238	2	7	7	8	6	8	5	4	13	12
239	1	1	1	2	1	0	1	4	4	3
235 <sup>1</sup>	0	0	0	0	0	0	0	0	0	1
ընդամենը	212	263	482	554	495	470	489	576	687	812

Ձենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 2007-2016թթ վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին դրանք բավականին տարածված են և ունեն աճման միտում: Վերջին 10 տարիների ընթացքում զենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններն աճել են գրեթե 4 անգամ, որոնց մեջ դոմի-

<sup>5</sup> St' u И.В. Дирютин. Проблемы борьбы с незаконным оборотом огнестрельного оружия // Вестник Удмуртского университета, 2010. Вып.4 էջ 100:

<sup>6</sup> Վիճակագրական տվյալները տրամադրվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից՝ 6/15-3318 գրությամբ, 20.11.2017:



նանտ է ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը: Նշված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ քննարկվող հանցագործությունները կայուն աճի միտում են դրսևորում:

Զենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների տարածքաբաշխության վերաբերյալ վիճակագրական պատկերը հետևյալն է՝

Աղյուսակ 2

Մարզ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ք.Երևան	67	84	128	134	97	115	116	124	141	196
Արագածոտն	6	5	17	18	13	11	11	8	19	41
Արարատ	11	12	24	24	19	15	13	22	45	61
Արմավիր	14	30	76	90	95	93	108	83	72	69
Գեղարքունիք	9	20	36	59	50	62	65	100	126	146
Լոռի	34	44	59	63	50	30	36	52	64	66
Կոտայք	17	18	31	34	48	40	43	51	58	76
Շիրակ	20	22	38	55	47	47	37	28	41	45
Սյունիք	13	3	19	30	24	17	19	15	12	20
Վայոց Ձոր	6	8	15	15	12	10	8	6	4	5
Տավուշ	9	11	30	22	33	21	24	78	100	86
Զվարթնոց օ/կ	6	6	9	10	7	9	9	9	5	1
ընդամենը	212	263	482	554	495	470	489	576	687	812

Հանրապետությունում, ըստ վիճակագրական տվյալների, դրանք առավել տարածված են Երևան քաղաքում, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում: Եվ եթե որոշենք հանցավորության մակարդակը, կտեսնենք, որ այն մարզերում ավելի բարձր է, ի տարբերություն Երևան քաղաքի, որտեղ ուրբանիզացիայի մակարդակն է բավականին բարձր: Որոշելով հանցավորության

մակարդակի գործակիցն (այսուհետ՝ հնգ) ըստ 100.000 բնակչի հաշվարկով<sup>7</sup> տեսնում ենք, որ զենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններն առավել տարածված են Տավուշի մարզում, որտեղ 2016թ. դրությամբ հնգ-ն կազմում է 69, Գեղարքունիքի մարզում՝ 63, Արագածոտնի մարզում՝ 32, Կոտայքի մարզում՝ 30, Լոռվա մարզում՝ 29, Արմավիրի մարզում՝ 26, Արարատի մարզում՝ 24, Շիրակի մարզում՝ 19, իսկ Երևանում՝ 18, Սյունիքի մարզում՝ 14 և Վայոց Ձորի մարզում՝ 10: Հաշվի առնելով զենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների լատենտայնությունը<sup>8</sup> երևույթի զարգացման միտումների վերաբերյալ պատկերացումները դառնում են խիստ մտահոգիչ: Հատկապես զենքի ապօրինի շրջանառության կայուն աճը ՀՀ-ում դիտարկվում է նաև ԱՊՀ երկրների շրջանակում<sup>9</sup>:

Տարբեր գնահատականների համաձայն՝ աշխարհում առկա է 500-639 միլիոն հրազեն, այսինքն՝ մոլորակի յուրաքանչյուր տասներորդ բնակչին բաժին է հասնում մեկ հրազեն: Այդ հրազեններից որոշակի մասն օրինական կարգով օգտագործվում է պետությունների կողմից իրավակարգի պաշտպանության համար, սակայն ՄԱԿ-ի միջազգային հետազոտությունների տվյալների համաձայն՝ հրազենի ապօրինի շուկան շարունակում է ընդլայնվել և կազմում է հրազենի համաշխարհային առևտրի ընդհանուր ծավալի 40%, չնայած այն հանգամանքին, որ գրեթե բոլոր պետությունները կիրառում են որոշակի մեխանիզմներ հրազենի շրջանառությունը կարգավորելու համար<sup>10</sup>:

**«Ձենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «Ժ» կետում սահմանված է զենքի և հրազենի հիմնական մասերի (այսուհետ՝ զենք) շրջանառության հասկացուք-**

<sup>7</sup> Հանցավորության մակարդակի գործակիցը որոշելու համար ազգաբնակչության թիվը վերցվել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածուից - 2016, էջ 41: [http://www.armstat.am/file/article/demog\\_2016\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/demog_2016_2.pdf), 05.11.2017:

<sup>8</sup> Տե՛ս Семенов Г.С. Динамика преступлений в сфере незаконного оборота оружия и преступлений, совершенных с использованием оружия, на территории государств-участников СНГ с 2006-2015 г. [http://teoria-practica.ru/rus/files/arhiv\\_zhurnala/2016/8/law/semyonov.pdf](http://teoria-practica.ru/rus/files/arhiv_zhurnala/2016/8/law/semyonov.pdf), վերջին այցելություն 02.12.2017:

<sup>9</sup> Տե՛ս Семенов Г.С, նույն աշխատությունը:

<sup>10</sup> Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ հանցավորության կանխարգելման և իրավախախտների հետ վերաբերմունքի մասին զեկույց, ՄԱԿ-ի 10-րդ կոնգրեսում: (A/CONF. 187/5): URL: [http://www.un.org/russian/topics/crime/10crime\\_congress.pdf](http://www.un.org/russian/topics/crime/10crime_congress.pdf):

**յունը, որպես՝** զենքի արտադրություն, առևտուր, վաճառք, փոխանցում, ձեռքբերում, հավաքածուների կազմում և ցուցադրում, հաշվառում, պահպանում, կրում, փոխադրում, տեղափոխում, օգտագործում, վերցնում և ոչնչացում, ինչպես նաև ներկրում Հայաստանի Հանրապետության տարածք և արտահանում Հայաստանի Հանրապետությունից: Նշված օրենքով կարգավորվում են զենք ձեռք բերելու, ինչպես նաև զենքի այլ շրջանառության հետ կապված հարցերը: Կարծում ենք, հարկավոր է մշակել զենքի շրջանառության կարճ և միաժամանակ տարողունակ (առանց թվարկման) սահմանում: Այն չպետք է լինի սպառիչ, քանի որ կարող են ի հայտ գալ շրջանառության նոր ձևեր, որոնք իրավական կարգավորման անհրաժեշտություն կունենան: Մեր կարծիքով զենքի, շրջանառության տակ պետք է հասկանալ դրանց գոյության, տարածքի և ժամանակի մեջ զարգացող՝ սկսած զենքի, նրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի արտադրությունից և վերջացրած դրանց ոչնչացումով: Օրինակ՝ «**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին**» ՀՀ կառավարության 673 որոշման 33-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ Պետական և համայնքին պատկանող թանգարանները, իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից հիմնադրված թանգարանները զենքի և դրա փամփուշտների հավաքչարություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ մշակույթի նախարարության համատեղ սահմանած կարգով՝ բացառությամբ ինքնաշեն, ապօրինաբար վերափոխված կամ ՀՀ տարածքում շրջանառությունն արգելված զենքի և դրա փամփուշտների տեսակների, ինչպես տեսնում ենք որպես ինքնուրույն իրավական հասկացություն նշված է վերափոխումը, որը փաստորեն նախատեսված չէ ոչ «Չենքի մասին» ՀՀ օրենքում, ոչ էլ ՀՀ քրեական օրենսգրքում: Իր հերթին դա առաջացնում է անորոշություն այն հարցի կապակցությամբ, թե ի՞նչ է նշանակում զենքի վերափոխում և արդյո՞ք այն նույնանում է զենքի նորոգման հետ:

Ապօրինի նշանակում է դրանց կատարումը «Չենքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ<sup>11</sup>: **Ապօրինի** տերմինի նշված բնորոշումն ընկած է ՀՀ ՔՕ 235, 236 հոդվածների ձևակերպման հիմքում:

<sup>11</sup> ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (5-րդ հրատ, փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետ. համալս– Եր: ԵՊՀ հրատ., 2011–1056 էջ:

Անհրաժեշտություն է առաջանում ընդգծել, որ զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի ապօրինի շրջանառության քրեաբանական հասկացությունը համարժեք չէ դրա քրեախրավական հասկացությանը: Հանցագործությունների քրեաբանական բնութագիրը ենթադրում է ոչ միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, այլև բովանդակում է տվյալներ այն մասին, թե իրականում ինչ է կատարվում կամ կարող է կատարվել. հանցագործության կատարման իրադրություն, պատճառներ և պայմաններ, դրա կանխարգելման միջոցներ<sup>12</sup>:

Քրեաբանական հետազոտության հիմնական ուշադրությունն ուղղված է, առաջին հերթին, այս երևույթի պատճառների և պայմանների, դրա կանխարգելմանը և պրոֆիլակտիկայի ուղղությամբ միջոցների մշակման վրա, իսկ քրեախրավական հետազոտության շեշտը դրված է ապօրինի կերպով զենքի, նրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի ձեռքբերման, իրացման, պահելու, փոխադրելու կամ կրելու համար պատասխանատվության և այդ հասկացությունների առավել հստակ իրավական կարգավորման վրա:

Ձենքի ապօրինի շրջանառության պատճառներին և պայմաններին անհրաժեշտ է դասել.

- հայ- ադրբեջանական ռազմական կոնֆլիկտը,
- վերոնշված առարկաների հաշվառման, պահպանման, փոխադրման, կրման կարգի խախտումները զինծառայողների, իրավապահ մարմինների ծառայողների և մասնավոր պահպանության կառույցների ներկայացուցիչների կողմից,
- այս հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ իրավապահ մարմինների միջև համագործակցության և անհրաժեշտ համաձայնեցվածության ցածր մակարդակը,

- զենքի հետ վարվեցողության կանոնների խախտումը:

Ձենքի ապօրինի շրջանառության կանխարգելումն իրենից ներկայացնում է լիազորված մարմինների և պաշտոնատար անձանց նպատակաուղղված գործունեություն՝ զենքի ապօրինի շրջանառությամբ հանցագործությունների կանխման (խափանման), հանրորեն վտանգավոր հետևանքների,

<sup>12</sup><https://cyberleninka.ru/article/v/k-voprosu-o-kriminologicheskoy-harakteristike-nezakonnogo-oborota-oruzhiya> վերջին այցելություն 29.11.2017

ինչպես նաև կրիմինոգեն գործոնների վերացման կամ չեզոքացման ուղղությամբ:

Զենքի ապօրինի շրջանառության կանխարգելիչ միջոցներն առաջին հերթին պետք է ուղղված լինեն օրինապահ քաղաքացիների կողմից զենքի (պահանջարկի բավարարումը օրինական ճանապարհով) կրման և պահման թույլտվության նկատմամբ պետական իրավասու մարմինների վերահսկողությանը, ինչը կբացառի ապօրինի թույլտվության հավանականությունը, կփակի զենքը ապօրինի շրջանառության մեջ դնելու բոլոր հնարավոր ուղիները: Նշված նպատակներին հասնելու արդյունավետությունը կախված է պրենտիվ միջոցների առանձնահատկություններից՝ զենքի ապօրինի շրջանառությանը նպաստող պատճառների և պայմանների վերացմանն ուղղված քաղաքական, սոցիալ- տնտեսական, իրավական բնույթի ընդհանուր պետական անհրաժեշտ միջոցառումների անցկացումից՝ հաշվի առնելով պետական մարմինների հնարավորությունները (առաջին հերթին՝ նյութական):

Անհրաժեշտ է իրականացնել պրոֆիլակտիկ աշխատանքների համակարգի որակական փոփոխություն, մշակել ներգործության առավել արդյունավետ միջոցներ՝ ինչպես հանցավորության, այնպես էլ զենքի ապօրինի շրջանառության համար: Հատկապես դա վերաբերում է թույլտվության և լիցենզավորման համակարգին, որի ծառայողները պարտավոր են օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին տրամադրել զենքի պահման և կրման թույլտվություն և լիցենզիա: Քաղաքացիներից կամ իրավաբանական անձանցից նման թույլտվություն և լիցենզիա ստանալու մասին ամեն մի դիմում մանրամասն պետք է ուսումնասիրվի՝ «Զենքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Քրեական հետախուզության, թույլտվության և լիցենզավորման ստորաբաժանման, համայնքային ոստիկանության ծառայողների պարտականությունների մեջ է մտնում ապօրինի զենք ունեցող անձանց հայտնաբերումը, ապօրինի կերպով պահվող զենքը ինքնակամ ոստիկանությանը հանձնելու ուղղությամբ ազգաբնակչության հետ բացատրական աշխատանքները, զենքի ապօրինի շրջանառություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը՝ դրանով իսկ կանխարգելելով այլ, առավել ծանր հանցագործությունները: Զենքի ապօրինի շրջանառության կանխար-

գելման գործընթացում կարևոր հատուկ քրեաբանական միջոց է հանդիսանում ոստիկանության կողմից ամեն տարի իրականացվող «Կանալ», «Զինանոց», «Վահան» օպերատիվ- պրոֆիլակտիկ օպերացիաները, որի արդյունքում կանխվում և խափանվում են զենքի ապօրինի շրջանառության փաստերը և բացահայտվում են զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների խախտումները: Ակնհայտ է այն փաստը, որ որքան շատ անվերահսկելի զենք հայտնվի բնակչության ձեռքին, այնքան շատ կկատարվեն դրա գործադրմամբ հանցագործություններ<sup>13</sup>:

Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը իր ծանր հետևանքներով դառնում է ընդհանուր կրիմինոգեն իրավիճակի վրա էականորեն ազդող հանգամանքներից մեկը: Հետևաբար, հանցագործությունների հատուկ պրոֆիլակտիկայի միջոցները պետք է ուղղված լինեն նաև ազգաբնակչության շրջանում սպառազինության առարկաների հայտնաբերմանն ու վերացմանը:

Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի շրջանառության ծավալի մինիմալացման արդյունավետ միջոց կարող է համարվել ազգաբնակչությունից դրա փոխհատուցման հիմունքներով ձեռքբերումը, որի արդյունքում զենքը, զինամթերքը, պայթուցիկ նյութերը, պայթուցիկ սարքերը կամովին հանձնած քաղաքացիները ոչ միայն կազատվեն քրեական պատասխանատվությունից, այլև կստանան դրամական փոխհատուցում: Այս հարցի լուծումը կարգավորելով օրենսդրական մակարդակով՝ կնպաստի քաղաքացիների շահագրգռվածությանը՝ ապօրինի հիմունքներով պահվող կամ առհասարակ օրինական շրջանառությունից դուրս մնացած վերոնշյալ առարկաների հանձնելուն:

Կանխարգելիչ մեծ ներուժ ունի ապօրինի զենքի շրջանառության մասնակիցների հետ հանցավոր դրական վարքագծի խթանումը, քանի որ համագործակցության արդյունքում կարող են մերկացվել այլ անձինք, որոնք մասնակից են հանցավոր գործունեությանը, ինչպես նաև ստանալ տեղեկատվություն զենքի թաքստոցների մասին<sup>14</sup>: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ

<sup>13</sup> Տե՛ս И.В. Дирютин. Նշված աշխատությունը, էջ 103:

<sup>14</sup> Տե՛ս Задоян А.А., Мацкевич И.М., Чучаев А.И. Проблемы криминологического предупреждения незаконного оборота оружия: монография. М.: Проспект, 2017. էջ 115 / ընդհանուր էջերը՝ 128/

զենքի ապօրինի շրջանառությունը հանդիսանում է կազմակերպված հանցավորության հանցավոր բիզնես, հետևաբար՝ կանխարգելումը պետք է ներառի հանցավոր կազմավորումների ձևավորմանը նպաստող պատճառների և պայմանների հայտնաբերումն ու վերացումը, կազմակերպված հանցավոր խմբերի հայտնաբերումը և լիկվիդացումը:

Ձենքի ապօրինի շրջանառության կանխարգելման միջոցներին են դասվում՝

1. զենքի խիստ հաշվառման ապահովումը՝ շրջանառության բոլոր մակարդակներում;

2. զենքի և նրա հիմնական մասերի գործարանային պատրաստվածության պահպանվածությանն ուղղված միջոցառումները;

3. զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների պահպանումը;

4. զենքի հաշվառման տեղեկատվափնտրողական ավտոմատացված համակարգի հետագա զարգացումը, միասնական կենտրոնացված միջգերատեսչական տվյալների բանկի ստեղծումը;

5. իրավապահ մարմինների փոխհամագործակցությունը՝ ներգրավելով ԱՊՀ և ՀԱՊԿ անդամ երկրների ներկայացուցիչներին;

6. զինվորական կազմավորումներում և իրավապահ մարմիններում, ինչպես նաև մասնավոր պահպանություն իրականացնող կազմակերպություններում զենքի հաշվառման, պահպանման, կրման, տեղափոխման կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը;

7. զենքի ապօրինի մատակարարման ուղիների փակումը:

Այսպիսով, զենքի ապօրինի շրջանառության վիճակից, նպաստող պատճառներից և պայմաններից ելնելով, այդ հանրորեն վտանգավոր արարքների կանխարգելիչ միջոցները պետք է իրականացվեն համալիր և համակարգված, իսկ կանխարգելիչ գործունեության բարձր արդյունավետությունը կապահովվի զենքի ապօրինի շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնող բոլոր սուբյեկտների փոխհամագործակցության շնորհիվ:

## ԶԵՆՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

### Խաչատրյան Հռիփսիմե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և  
քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,  
ոստիկանության մայոր*

Հոդվածը նվիրված է զենքի ապօրինի շրջանառության կանխարգելման n-րոշ հարցերին: Հոդվածում ներկայացվել են զենքի ապօրինի շրջանառության կրիմինոլոգիական բնութագիրը, դրան նպաստող պատճառներն ու պայմանները, և դրանց հիման վրա առաջ են քաշվել կանխարգելման միջոցներ:

**Բանալի բառեր.** զենքի ապօրինի շրջանառություն, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ НЕЗАКОННОГО ОБОРОТА ОРУЖИЯ

### Хачатрян Рипсима Мгеровна

*Старший преподаватель кафедры уголовного права  
и криминологии факультета правоведения Академии  
Образовательного комплекса полиции Республики Армения,  
майор полиции*

Статья посвящена некоторым вопросам предупреждения незаконного оборота оружия. В статье представлена криминологическая характеристика незаконного оборота оружия, причины и условия, способствующие ему, на основе которых выдвинуты меры предупреждения.

**Ключевые слова:** незаконный оборот оружия, оружие, боеприпасы, взрывчатые вещества, взрывчатые устройства.



---

## SOME ISSUES OF PREVENTION OF GUN TRAFFICKING

**Khachatryan Hripsime**

*Senior Lecturer of the Chair of Criminal Law and  
Criminology of the Academy of Educational Complex of  
Police of the Republic of Armenia,  
Police Major*

---

This article is devoted to some issues of criminological prevention of gun trafficking. The criminological characteristics of gun trafficking, the reasons and conditions that contribute to it, on the basis of which preventive measures have been put forward.

**Keywords:** gun trafficking, weapon, ammunition, explosives, explosive devices.

## ԲՆԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ

### Կոչուրան Ալեքսանդր

*ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության  
ավագ իրավախորհրդատու, ՀՀ ոստիկանության  
կրթահամալիրի ակադեմիայի մագիստրանտ,  
ոստիկանության ավագ լեյտենանտ*

Մարդկային միտքը միշտ էլ ձգտել է գտնել մի այնպիսի «աստվածային էտալոն», որի վրա հնարավոր կլինի կառուցել հասարակական կյանքը: Նման աշխարհայացքի ձևավորման հարցում առանցքային է եղել (կարծում ենք, որ այն նաև այդպիսին է այսօր) Սուրբ գրքերի դերը<sup>1</sup>, որոնց բարոյակրոնական կանխադրույթները հավակնել են կարգավորել մարդկանց կենսագործունեության առանձին բնագավառներ՝ դուրս գալով մաքուր կրոնական հարցերի կարգավորումից: Ավելի ուշ կրոնական դոգմաները իրենց արտահայտությունն են գտել նաև համաշխարհային իրավական մտքի (ինչպես նաև երկրների օրենսդրությունների) մեջ: Օրինակ՝ սպանության համար իրավաբանական պատասխանատվության սահմանման հարցի հիմքում դժվար չէ նկատել աստվածաշնչյան «մի՛ սպանիր» պատվիրանը:

Հասարակական կյանքի նորմատիվ կարգավորման «աստվածային նախասկզբի» փնտրտուքները հանգեցրել են բնական իրավունքի հայեցակարգի ձևավորմանը, որն, ըստ էության, կոչված էր ապահովել հավասարակշռվածություն «աստվածային կամքի» և հասարակական կյանքի նորմատիվ կարգավորման միջև:

«Բնական իրավունք» կատեգորիան ձևավորվել և զարգացել է ոչ միայն որպես փիլիսոփայական-իրավական հայեցակարգ, այլ նաև, մեր կարծիքով, այն միշտ յուրօրինակ իդեալ է եղել. մարդը, ցանկանալով ստեղծել, հիմնավորել ամեն ինչի համընդանուր սկիզբը, ստեղծել է բնական իրավունքի հաս-

<sup>1</sup><<Սուրբ գիրք>> եզրույթի ենթատեքստում ի նկատի ունենք առհասարակ բոլոր կրոնական բնույթի աշխատությունները, որոնք ժողովուրդների համար ունեն սոցիալական կարգավորիչի նշանակություն:

կացույթը, որտեղ ամեն ինչ պետք է համապատասխանի «ընդհանուր գործերի կառավարչի» բարձրագույն կամքին:

Ամբողջացնելով իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումները՝ կարելի է պնդել, որ բնական իրավունքը՝ որպես իրավամտաճողության յուրահատուկ տեսակ, ավանդաբար ծագել և զարգացել է գրված օրենքների և բնության կանոնների առաջնայնության շուրջ բանավեճի արդյունքում:

Բնական իրավունքին նվիրված աշխատությունների մեծ մասում տեսության ծագումը կապվում է նիդերլանդցի ակննավոր մտածող Հուգո Հրոցիուսի անվան հետ<sup>2</sup>:

Կարծում ենք, որ գնահատականը վիճահարույց է: Կարելի է խոսել այն մասին, որ Հրոցիուսի հայացքներում բնական իրավունքի տեսությունը որոշակի իմաստով ավարտուն տեսք է ստացել: Այս տեսության գաղափարական հենքի ձևավորման խնդրում անգնահատելի ավանդ են ունեցել այլ ակննավոր մտածողներ ևս, ինչին կանդրադասոնանք ստորև: Ասվածը չպետք է նսեմացնի Հրոցիուսի դերակատարումը, քանի որ վերջինս ամբողջացրել է մինչ այդ առկա մոտեցումները և մատուցել հստակ ձևավորված կոնցեպցիա:

Բնական իրավունքի ծագման և զարգացման հիմնահարցի հետազոտման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ ենք համարում գիտական գրականության մեջ առկա մոտեցումները պայմանականորեն խմբավորել ըստ խմբերի (հին դարեր, միջնադար, նոր և նորագույն ժամանակներ)՝ նպատակ ունենալով ցույց տալ պատմական տարբեր ժամանակահատվածներում հիմնախնդրին վերաբերող մոտեցումների զարգացման տեմպերը:

Մատենագրությունը վկայում է, որ դեռևս Հին Եգիպտոսում երկրային կյանքի օրենքների (տիրող կարգի) ծագումը կապվում էր աստվածային սկզբի հետ: Նրանք համոզված էին, որ աստվածներն են ստեղծել պետությունն ու գործող կարգավորիչները: Հին Եգիպտացիների առասպելական-կրոնական հայացքներում ամփոփված էր այն գաղափարը, որ արդարությունն ու արդարադատությունը (լատ.՝ *in iudicio et iustitia*) մարմնավորում է Մաստ (Մա-ատ) աստվածուհին: Երկրային իշխանության և հաստատված վարքագծի կանոնների, այդ թվում հիշատակվող ժամանակների իրավունքի

<sup>2</sup> <http://read.virmk.ru/HISTORY/LEIST/010.htm>, 02.04.2017թ. <http://poisk-ru.ru/s58408t1.html>, 02.04.2017թ. <http://udik.com.ua/books/book-1827/chapter-74215/>, 02.04.2017թ և այլն:

աղբյուրների աստվածային բնույթը նշանակում էր, որ դրանք համապատասխանում կամ պետք է համապատասխանեն «Մա-ատին», այսինքն՝ արդարության բնական-աստվածային կարգերին: «Մա-ատը» այստեղ ունի ճշմարտության-արդարության իմաստ, որը հետագայում դրվելու է բնաիրավական իրավաբանական հիմքում և անվանվելու է բնական իրավունք<sup>3</sup>:

Հին Եգիպտոսում պատկերացում է եղել ելակետային, հիմնարար գաղափարների հենքի վրա հասարակական կյանքի կարգավորման անհրաժեշտության մասին: Մաատը հանդիսանում է արդարություն, արդարադատություն, ճշմարտություն: Վարքագծի կարգավորման հարցում պետք է հենվել Մաատի միջոցով մարմնավորված «սկզբունքների» վրա: Դժվար չէ նկատել, որ Մաատը հին եգիպտացիների մոտ ունեցել է ներկայիս սահմանադրության դերակատարությունը: Սակայն սա այլ տեսակի սահմանադրություն է. սա «աստվածային սահմանադրություն» է:

Հին Հունաստանում սովետները պոլիսներում գործող կարգերը քննադատելու համար օրենքերը հակադրում էին բնությանը: Սովետ մտածող Անտիֆոն Աթենացին գտնում էր, որ օրենքներն արհեստական են և կամայական, մինչդեռ բնության մեջ ամեն ինչ տեղի է ունենում ինքնաբերաբար՝ ըստ անհարժեշտության: Նա գտնում էր, որ հելենները, մեծարելով ազնվականներին, վարվում են ինչպես բարբարոսներ: Բարբարոսներն ու հելենները բոլոր առումներով հավասար են: Կրտսեր սովետ Ալկիդամասը հայտարարում էր, որ բնությունը ոչ մեկին ստրուկ չի դարձրել, Աստված բոլորին ստեղծել է հավասար<sup>4</sup> (աստվածային հավասարության բանաձևը):

Այստեղ հետաքրքիր համադրություն կարելի է տեսնել ակադեմիկոս Վ. Ներսիսյանցի ձևական հավասարության գաղափարի հետ:

Արիստոտելը նկատել էր, որ քաղաքական իրավունքը<sup>5</sup> բաժանված է բնականի և պայմանականի (կամընտիր): Ըստ նրա՝ քաղաքական իրավունքը մասամբ բնական է, մասամբ՝ պայմանական: Բնական է այն իրավունքը,

<sup>3</sup> История политических и правовых учений / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА • М), 2000. թ. 19-20 էջեր

<sup>4</sup> История политических и правовых учений: Учебник Под ред. О.Э. Лейста М.: Юридическая литература, 1997. 44 էջ

<sup>5</sup> Կարծում ենք՝ քաղաքական իրավունք ձևակերպումն օգտագործելիս Արիստոտելը ցանկացել է բնութագրել իր ժամանակներում գործող իրավական համակարգը:

որն ունի համընդհանուր նշանակություն և վերջինիս պետականորեն ճանաչումը կարևոր չէ: Արխատոտելը, թեև տարանջատում էր բնական և պայմանական իրավունքները, սակայն դրանք դիտարկում էր որպես քաղաքական երևույթ, այսինքն, ի վերջո, նա պնդում էր, որ իրավունքը (և՛ բնական, և՛ պայմանական), ունի վառ արտահայտված քաղաքականացված բնույթ<sup>6</sup>: Ժամանակակից գիտության նվաճումների բարձունքից նշված մոտեցումը չի դիմանա որևէ քննադատության, քանի որ բնական իրավունքի հայեցակարգի գլխադասային գաղափարն այն է, որ գոյություն ունի իրավունքների մի այնպիս կազմ, որոնք քաղաքականության (և, առհասարակ, մարդաստեղծ երևույթների) շրջանակներից վեր են: Սակայն դժվար է թերագնահատել Արխատոտելի դերն ու նշանակությունը հետազոտվող տեսության գաղափարախոսության սաղմնավորման հարցում: Այն, որ Արխատոտելը «գզացել է», որ բացի «պարտադրված իրավունքից» գոյություն ունի մեկ այլ, վերմարդկային իրավունք, արդեն մեծ առաջընթաց էր:

Բոլորովին այլ էր իրավիճակը Հին Հնդկաստանում: Այստեղ հասարակությունը բաժանված էր (հարաբերականության որոշակի տարերով այն պահպանվել է ցայսօր) 4 սոցիալական խմբերի, որոնք կոչվում էին վարնաներ՝ բրահմաններ, քշատրիներ, վայշիներ, շուդրաներ<sup>7</sup>: Հին Հնդկաստանի միջաշին պատումներում խոսվում է այն մասին, որ վարնաները առաջացել են տիեզերական հսկա Պուշուրիի մարմնից. ընդ որում՝ բրահմանները սերված են Պուշուրիի բերանից, քշատրիները՝ ձեռքերից, վայշիները՝ կոնքերից, շուդրաները՝ ոտնաթաթերից: Այս վարնաներից առաջին երեքի ներկայացուցիչները համարվում էին համայնքի լիիրավ անդամներ, իսկ շուդրաները գտնվում էին կախյալ վիճակում<sup>8</sup>: Ակնհայտ է, որ կաստայական բաժանումը պայմանավորում էր նաև վերջններիս <«իրավասուբյեկտության» ծավալը: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, որ «ի ծնե», բնական իրավունքների մասին այստեղ կարող ենք խոսել միայն կոնկրետ վարնայի վերաբերությամբ: Այսինքն՝ եթե մարդը ծնվել է որպես քշատրին, նրան վերաբերվում են բոլոր այն իրավունքներն

<sup>6</sup> История политических и правовых учений / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсисянца. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА · М), 2000. р. 69 էջ

<sup>7</sup> <http://indianochka.ru/kultura/obshhestvo/kasty.html> 08,04,2017,

<sup>8</sup> История политических и правовых учений: Учебник Под ред О.Э. Лейста М.:Юридическая литература, 1997.15 էջ

ու արտոնությունները, որոնք ավանդաբար ունեցել են այս կաստայի ներկայացուցիչները: Հնդիկները չէին ընդվզում իրենց կարգավիճակի դեմ՝ համարելով դա երկնային կամք: Նրանց մտածողության հիմքում ընկած էր ռեինկարնացիայի գաղափարը: Հնդիկների խորին համոզմամբ, եթե մարդը ապրի առաքինի կյանքով, հաջորդ կյանքում կձևվի սոցիալական ավելի բարձր կարգավիճակով, իսկ հակառակ պարագայում հոգով կիջնի ընդհուպ մինչև կենդանու կամ բույսի մակարդակի: Ակնառու է, որ հնդիկների մոտ բնական իրավունքի գաղափարը ձևավորվել է որակապես այլ հենքի վրա: Նրանք իրենց սոցիալական ծագումը և դրանից բխող հետևանքները համարում էին բնական երևույթ:

Իրավունքների, պետության, մարդու ծագման վերաբերյալ կրոնական բնույթի բացատրություններ ենք գտնում նաև Հին Չինաստանում, որտեղ տիրապետում էին հիմնականում դաոսիզմի, կոնֆուցիականության, մաոիզմի և լեզիզմի գաղափարախոսությունները:

Հետաքրքրական է հատկապես բնական իրավունքի և դաոսիզմի հարաբերակցությունը: Ուսմունքի հիմքում ընկած է «դաոի» (բառացի՝ ճանապարհ) գաղափարը: Վերջինս փոխառվել է չինական ավանդություններից, որտեղ այն ուներ մարդու, ժողովրդի ճշմարիտ կյանքի ուղու իմաստ, որը համապատասխանում է երկնքի թելադրանքին: Վերաիմաստավորելով այս հասկացությունը՝ դաոսիզմի հիմնադիրները ձգտում էին հիմնավորել, որ երկնային<sup>9</sup> կամքն է շնորհել դաոի օրենքները ժողովրդին: Համաձայն Լաո Յզիի հետևորդների մեկնաբանության՝ դաոն աշխարհի բացարձակ սկիզբն է: Ավելին, նրանք գտնում էին, որ դաոն նախորդում է երկնային տիրոջը և իր հզորությամբ գերազանցում է վերջինիս: Դաոն է ամեն ինչի սկիզբը, բնական սկզբի և փոփոխությունների անվերջ հոսքը, դրանց փոխակերպումը մի ձևից մյուսի, ծննդի ու մահվան մշտնջենական պտույտը: Մարդուն այն ներկայանում է գերբնական օրենքի տեսքով, որը կառավարում է աշխարհը: Այս ուժի դեմ մարդուն մնում է միայն գիտակցել սեփական մանրությունն ու կրքերից ազատվելու ճանապարհով երկարացնել իր կյանքը<sup>10</sup>: Ինչպես տեսնում ենք, Չինաստանում ևս աշխարհի սկիզբը և մարդու դերն այդ աշխարհում կապվում է ինչ-որ վերերկրային ուժի հետ: Այստեղ ևս առաջարկվում է ընդունել գործող

<sup>9</sup> Բուն աշխատանքում երկնային բաժի փոխարեն օգտագործված է երկրային բառը, ինչը, կարծում ենք, տպագրական սխալ է, քանի որ հակառակ պարագայում միտքը զրկվում է տրամաբանությունից:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը 20 էջ:

կարգերն՝ առանց «փոփոխությունների և լրացումների»:

Հին Հռոմում իրավաբանները քաղաքացիական իրավունքի և ժողովուրդների իրավունքների շարքում առանձնացնում էին բնական իրավունքը (*ius naturale*)՝ որպես բնության օրենքների և իրերի բնական կարգի արտացոլում:<sup>11</sup>

Այս կամ այն տարբերությամբ՝ մոտեցման այսպիսի ձևաչափը բնորոշ էր հիմնախնդրով զբաղվող գրեթե բոլոր հռոմեացի իրավաբաններին:

Որպես օրինակ վկայակոչենք Ցիցերոնին, ով ասում էր, որ պետության օրենքը, որը հակասում է բնական իրավունքին, չի կարող դիտվել որպես օրենք:<sup>12</sup>

Բնական իրավունքը՝ որպես գաղափարաբանություն, մինչև միջնադար պահպանեց իր «նախնական» տեսքը և որպես մարդու իրավունքների տեսություն վերջնականապես չձևակերպվեց:

Միջնադարարին բնորոշ բոլոր բնագավառների «կրոնականացումը» չէր կարող արհամարհանքով անցնել այնպիսի ոլորտների կողքով, ինչպիսիք են մարդը, նրա դերը աշխարհում, մարդու իրավունքները, ազատությունները, դրանց ստեղծարար սկիզբը և այլն: Ակնառու է, որ վկայակոչված ոլորտները հանդիսանում են նաև բնաիրավական տեսության հետագոտման առարկան:

Մարդու իրավունքների ծագման «աստվածային դոկտրինի» խոշորագույն տեսաբաններից էր Թոմաս Աքվինացին, ում հայացքներում կարելի է տեսնել բնական իրավունքների վերաբերյալ կրոնական պատկերացումների խտացված արտահայտությունը: Թ. Աքվինացին հստակ տարբերություն էր տեսնում գրված և չգրված օրենքների միջև: Խոսելով, իր ձևակերպմամբ, մարդկային (դրական, գրված) իրավունքի մասին՝ հեղինակը ի նկատի էր ունենում ֆեոդալական իրավունքը: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հեղինակը ժխտում էր մարդկային (դրական) այն օրենքների նշանակությունը, որոնք հակասում էին բնական օրենքի սահմանած դրույթներին: Նրա համար օրենքներ չէին համարվում ինքնապահպանման, ընտանեկան կյանքի և դաստիարակության, ճշմարտության (Աստծո) փնտրտուքի և մարդկանց արժանավայել շփման կարիքներին հակադարձող դրույթները: Ըստ Աքվինացու՝ օրենքի մեկ այլ տեսակ է աստվածայինը: Այն տրվում է Աստվածաշնչում և անհրա-

<sup>11</sup> Պետության և իրավունքի տեսություն, Խոռոպանյուկ Վ.Ն., Եր.Գոշ, 1997թ, թարգ. Խ.Հարությունյան էջ 208

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը:

ժեշտ է 2 պատճառներով: Առաջին հերթին, մարդկային (դրական) օրենքը ընդունակ չէ չարիքը ամբողջովին բնաջնջելու, և, երկրորդ՝ մարդկային մտքի անկատարելության պատճառով: Մարդիկ ինքնուրույն չեն կարող հանգել ճշտի մասին միասնական պատկերացման<sup>13</sup>: Այս ամենով հանդերձ՝ Թ. Աքվինացին նշում էր, որ ֆեոդալական գրված օրենքները պետք է անշեղորեն կատարվեն, ինչպես աստվածային ցուցումները: Ամենայն հավանականությամբ, Թ. Աքվինացին փորձում էր կրոնական դոգմատիկայի միջոցով նպաստել պետական կառավարման արդյունավետ իրականացմանը:

Բնաիրավական գաղափարախոսությունը թռիչքաձև զարգացում ապրեց հատկապես 17-րդ դարում՝ շնորհիվ իրավական մտքի խոշորագույն անգլիական ներկայացուցիչներ Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի, ֆրանսիացի լուսավորիչներ Շառլ Լուի Մոնտեսքիոյի, Ժան Ժակ Ռուսոյի և նիդերլանդցի տեսաբան Հուգո Հրոցիուսի:

Թ. Հոբսը իր բնաիրավական ուսմունքը կառուցում էր մարդու բնության և կրքերի հետազոտման վրա: Հոբսը խիստ քննադատորեն էր վերաբերվում այդ կրքերին՝ գտնելով, որ մարդկանց բնութագրական է մրցակցությունը, անվստահությունը, փառասիրությունը: Այս կրքերը մարդկանց դարձնում են թշնամիներ<sup>14</sup>: Գալով այսպիսի եզրահանգման՝ Հոբսը սովեց իրավագիտությանը ամենահայտնի ասույթներից մեկը՝ *homo homini lupus est* (մարդը մարդուն գայլ է):

Հոբսը գտնում էր, որ բնական վիճակում, որտեղ չկա մարդկանց վախի մեջ պահող իշխանություն, տեղի է ունենում *bellum omnia contra omnes*<sup>15</sup> (բոլորի պատերազմը բոլորի դեմ): Այսպիսի կարգավիճակի կործանանար ուժը ստիպում է մարդկանց դուրս գալ բնական վիճակից: Այս ուղին մարդկանց թելադրվում է բնական օրենքների (կարծում ենք հեղինակը ի նկատի ունի բնության օրինաչափությունները), բանականության «կարգադրագրերի» կողմից: Համաձայն Հոբսի գրչի՝ բնության մեջ գոյություն ունեն բնական իրավունքներ և

<sup>13</sup> История политических и правовых учений / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА • М), 2000. Թ. 124 էջ

<sup>14</sup> История политических и правовых учений: Учебник Под ред Э. Лейста М.:Юридическая литература, 1997. 192 էջ

<sup>15</sup> Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել այս ձևակերպման այլ շրջադարձեր. օրինակ *Omnium bellum contra omnes*: Մրանք, ըստ էության, հակասություններ չեն, քանի որ բնութագրում են միևնույն երևոյթը էքվիվալենտ ձևով:



բնական օրենքներ: Առաջինի տակ Հոբսը հասկանում էր ազատությունը՝ անել ամեն ինչ ինքնապահպանման համար, իսկ 2-ում ընդգծում է այն արգելված գործողությունները, որոնք կործանարար են կյանքի (ենթադրում ենք՝ համակեցության) համար:

Բնական օրենքները հռչակում են՝ պետք է փնտրել խաղաղություն և այդ նպատակով հրամայական է փոխադարձաբար հրաժարվել «ամեն ինչ անելու» իրավունքից: Հրաժարվելով բնական իրավունքներից (վերը բերված իմաստով)՝ մարդիկ այդ «գործառույթը» փոխանցում են պետությանը<sup>16</sup>: Թ. Հոբսը առաջիններից էր, որ ձևակերպեց, մեր օրերում բանաձևային համարվող այն դրույթը, համաձայն որի այն ինչ արգելված չէ օրենքով՝ թույլատրելի է:

Հոբսի համաձայն՝ դիտարկվող կոնցեպտը բնութագրվում է այսպես. «Այնտեղ, որտեղ սուվերենը չի նախատեսել որևէ կանոններ, հպատակը ազատ է իր հայեցողությամբ ընտրել՝ դրսևորել կոնկրետ վարքագիծը»<sup>17</sup>:

Ակնառու է, որ Թոմաս Հոբսի վերը բերված ընկալումները միտված էին մարդու՝ որպես անհատականության ուսումնասիրությանը, նրա իրավունքների հիմնավորմանը մարդկային բանականության միջոցով:

Ջոն Լոկը ևս հանդիսանում էր բնաիրավական տեսության դրոշակակիր: Ինչպես շատ այլ հեղինակներ, նա ևս մարդու իրավունքներին վերաբերող իր դատողությունները բացահայտում է պետության հասկացությունն ու էությունը լուսաբանելիս:

Պետության առաջացման պայմանագրային տեսության միջոցով բնութագրելով պետությունը, վերջինիս ծագումը և նշանակությունը՝ Լոկը տրամաբանական շեշտը դնում է այն հանգամանքի վրա, որ մարդիկ, կամավոր ստեղծելով պետությունը, պետք է հետևեն բացառապես իրենց բանականությանը: Մարդիկ սպառիչ և պարփակված որոշում են այն լիազորությունների ծավալը, որոնք նրանք փոխանցում են պետությանը: Բնական իրավունքների և հիմնարար ազատությունների՝ տոտալ հրաժարման մասին (հոգուտ պետության) խոսք գնալ չի կարող<sup>18</sup>: Կյանքի, սեփականության, հավա-

<sup>16</sup> Ավելի մանրամասն՝ տես նույն տեղը:

<sup>17</sup> Նշված աշխատության 194 էջ:

<sup>18</sup> Մրանով Լոկը միաժամանակ հակադարձում է Հոբսին, ով տրամագծորեն հակառակ դիրքորոշում ուներ:

սարության և ազատության իրավունքները մարդը ոչ մի պարագայում չի կարող օտարել<sup>19</sup>:

Լուրը էական նշանակություն էր տալիս օրենքներին: Նա գտնում էր, որ քաղաքացիական հասարակության կամ օրենսդրի կողմից ընդունված ցանկացած կարգադրագիր դեռևս օրենք չէ:

Օրենքի «տիտղոս» կարող է ստանալ միայն այն ակտը, որը բանական էակին ցույց է տալիս այնպիսի վարքագծի կանոններ, որոնք համապատասխանում են իր սեփական «շահերին» և ծառայում համընդհանուր բարօրությանը<sup>20</sup>:

Իրականում՝ անգնահատելի են այս երկու հեղինակների տեսական ներդրումները պետության և իրավունքի տեսության հետագա զարգացման գործում: Թեև հեղինակները ողջ խորությամբ չեն ուսումնասիրում մարդու բնական իրավունքների հայեցակարգը, սակայն արեցին շատ ավելին. հենց նրանց գաղափարաբանության հենքի վրա ձևավորվեցին իշխանությունների տարանջատման, սահմանադրականության (կոնստիտուցիոնալիզմի) սկզբունքները, որոնք էլ հանդիսանում են այն երաշխիքների հավաքածուն, որոնք ապահովում են մարդու բնական իրավունքների անխախտ իրացումը:

Բնույթով այդպիսին էին նաև ֆրանսիացի նշանավոր լուսավորիչներ Շառլ Լուի Մոնտեսքյոյի և Ժան-ժակ Ռուսոյի հիմնադիր մեկնաբանությունները:

Բնական իրավունքի տեսության հետագա զարգացումը շարունակվեց աշխարհի ամերիկյան հատվածում, որտեղ այս տեսությունը ընդունեց վառ արտահայտված գործնական նշանակություն: Անվիճելի է, որ ԱՄՆ-ն սահմանադրության՝ որպես նորմատիվ-սոցիալական փաստաթղթի հայրենիքն է և հենց այս երկրի սահմանադիր հայրերն էին, որ կյանքի հավիտենական օրենքները (մարդու բնական իրավունքների առումով) իմպլեմենտացրին սահմանադրական<sup>21</sup> արեալ: Ասվածը վերաբերում է Անկախության ամերիկյան հռչակագրին (1776թ. հուլիսի 4), որն, ըստ էության, առաջին քաղաքական փաստա-

<sup>19</sup> История политических и правовых учений / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА · М), 2000. р. 334 էջ

<sup>20</sup> Տե՛ս՝ նշված աշխատության 335 էջ

<sup>21</sup> Սահմանադրական արեալ եզրույթի օգտագործումը ինքնին պայմանական է, քանի որ այստեղ ի նկատի չի առնվում սահմանադրությունը իր դասական դրսևորմամբ:

թուղթն էր, որում խոսվեց մարդու, ժողովրդի բնական և անօտարելի իրավունքների մասին: Այս փաստաթղթով, հայտնի չափով, տրվեց բնական իրավունքների հստակ ցանկ: Հռչակագիրը ազդարարեց, որ Տիրոջ կողմից բոլոր մարդիկ օժտված են կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքներով: Այստեղ խոսվեց նաև ժողովրդի **կուլեկտիվ բնական իրավունքների** մասին (ժողովրդի անխակության հաստատման իրավունքը, կառավարման տիրապետող համակարգը նորով փոխարինելու իրավունքը)<sup>22</sup>:

Ընդ որում՝ բնական իրավունքի տեսության զարգացման համար այս ժամանակները և իրադարձությունը հեղափոխական ազդեցություն ունեցան: Տեղի ունեցան բնական իրավունքների ցանկի շուրջ բանավեճեր, դրանց ամրագրումներ քաղաքական, նորմատիվ փաստաթղթերում. դարերի խորքից ձևավորված սաղմերը ստացան ավարտուն հայեցակարգի տեսք:

Ամերիկյան հռչակագրին հաջորդեց ֆրանսիայում մարդու և քաղաքացու հռչակագրի ընդունումը (1789թ.), որում հստակ խոսվեց այնպիսի հիմնարար դրույթի մասին, ինչպիսին օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարությունն է: Այս հռչակագրի արժանիքներից է նաև այն, որ վերջինս ամրագրում ունի առ այն, որ «մարդիկ ծնվում և ապրում են ազատ և հավասար իրավունքներով»<sup>23</sup>: Ինչպես տեսնում ենք՝ այս հռչակագրում արդեն գոյություն ունի հստակ պատկերացում մարդու բնական և անօտարելի իրավունքների մասին:

Մինչև երկրորդ աշխարհամարտ բնական իրավունքի տեսությանը բնութագրական էր այն, որ վերջինիս դրույթները արմատավորվում էին պետությունների սահմանադրություններում:

Երկրորդ աշխարհամարտից, Միավորված ազգերի կազմակերպության, տարբեր միջազգային կառույցների հիմնադրումից հետո, բնական իրավունքի տեսությունը ենթարկվեց ևս մեկ բեկումնային փոփոխության:

Բնական իրավունքի տեսությունը այս շրջանում կատարյալ «ռենեսանս» էր ապրում: Հենց այս շրջանում էր բնական իրավունքը վերաիմաստավորվում, ձևավորվում էին նոր մոտեցումներ, մեկնաբանություններ: Այս գործընթացը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «վերածնված բնական

<sup>22</sup> Տե՛ս ԱՄՆ անկախության 1776թ. հռչակագիրը ([www.russiantampa.com/about\\_usa/declaration.php](http://www.russiantampa.com/about_usa/declaration.php) 12.05.2017թ.)

<sup>23</sup> Տե՛ս Մարդու և քաղաքացու 1789 թ հռչակագիրը, Ֆրանսիա [www.agitclub.ru/museum/revolution1/1789/declaration.htm](http://www.agitclub.ru/museum/revolution1/1789/declaration.htm)

իրավունք» անվանմամբ:

Այս ամենի արդյունքը եղավ այն, որ ընդունվեցին մարդու բնական իրավունքներին վերաբերող մի շարք հեղինակավոր միջազգային իրավական փաստաթղթեր (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և այլն):

Արդեն մեր օրերում՝ բառօգտագործման իմաստով, *iusnaturalizm*-ը՝ մարդու իրավունքների բնաիրավական տեսությունը, մասնագիտական գրականության մեջ իր տեղը զիջել է նոր հիմնարար իրավաբանական ոլորտի՝ Մարդու իրավունքների տեսության:

Որպես հետազոտության ամփոփում՝ կարող ենք վստահորեն արձանագրել, որ բնական իրավունք տեսությունը ծագեց և զարգացավ սուր բանավեճերի արդյունքում: Իրավական քարտեզի իմաստով այն ընդգրկեց աշխարհի բոլոր ներկա և նախկին հասարակությունները: Պատմականորեն այս տեսության ներսում ձևավորվեց մի այնպիսի հայացքների համախումբ, համաձայն որոնց՝ մարդը ծնունդի փաստով ունի որոշակի իրավունքներ և ազատություններ, որոնք անդորոենադրական մակարդակում են, նախորդում են դրան և օրենքի (պոզիտիվ իմաստով) միջոցով չեն կարող նեղացվել կամ սահմանափակվել:

## ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ

### Կոչուբան Ալեքսանդր

*ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության  
ավագ իրավախորհրդատու, ՀՀ ռստիկանության  
կրթահամալիրի ակադեմիայի մագիստրանտ,  
ռստիկանության ավագ լեյտենանտ*

Մարդկային միտքը միշտ էլ ձգտել է գտնել մի այնպիսի «աստվածային էտալոն», որի վրա հնարավոր կլինի կառուցել հասարակական կյանքը: Վերջինիս նորմատիվ կարգավորման «աստվածային նախասկզբի» փնտրտուքները հանգեցրել են բնական իրավունքի հայեցակարգի ձևավորմանը, որն,

---

ըստ էության, կոչված էր ապահովել հավասարակշռվածություն «աստվածային կամքի» և հասարակական կյանքի նորմատիվ կարգավորման միջև:

Հոդվածում հեղինակի կողմից հետազոտված են բնական իրավունքի սաղմնավորման, պատմական զարգացման և արդի իրավիճակի խնդիրները: Հեղինակը սեփական դիտանկյունից ամփոփ ներկայացնում է մարդու բնական իրավունքի տեսության պատմությունը:

**Բանալի բառեր.** բնական իրավունք, մարդու իրավունքներ, չգրված, գրված օրենքներ, մարդու իրավունքների պատմություն:

## ЗАРОЖДЕНИЕ И ИСТОРИЧЕСКАЯ ЭВОЛЮЦИЯ КОНЦЕПЦИИ ЕСТЕСТВЕННОГО ПРАВА

**Кочубаев Александр Сергеевич**

*Старший юрисконсульт Управления города Ереван*

*Полиции Республики Армения, магистрант*

*Академии Полиции Республики Армения,*

*старший лейтенант полиции*

---

Человеческий ум всегда стремился найти такой «божественный эталон», на котором было бы возможно построить общественную жизнь. Поиски божественного первоначала» нормативного регулирования последней привели к формированию концепции естественного права, которая, по существу, была призвана обеспечить баланс между «божественной волей» и нормативным регулированием общественной жизни.

В данной статье исследуются проблемы зарождения естественного права, его исторического развития и текущего состояния. Автор с собственной точки зрения представляет краткое изложение истории теории прав человека.

**Ключевые слова:** естественное право, права человека, неписанные, писанные законы, история прав человека.

## THE ORIGIN AND HISTORICAL EVOLUTION OF THE CONCEPT OF NATURAL LAW

**Kochubaev Aleksandr**

*Senior Legal Adviser at the Yerevan City  
Department of Police of the Republic of Armenia,  
Graduate Student of the Academy of Educational  
Complex of Police of the Republic of Armenia,  
Police Senior Lieutenant*

---

The human mind has always sought to find such a "divine standard" on which it would be possible to build a social life. The searches for the "Divine Arche" of the normative regulation of the latter led to the formation of the concept of natural law, which, in essence, was intended to balance the "divine will" and the normative regulation of the social life.

The article explores the problems of the birth of natural law, its historical development and current state. The author presents the summary of the history of human rights theory from his own point of view.

**Keywords:** natural law, human rights, unwritten, written laws, history of human rights.

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍԱՆՈՂ- ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎ

### Մեկիքսերթյան Արմինե

*ՀՀ ռոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի  
և քրեաբանության ամբիոնի դոցենտ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ռոստիկանության փոխգնդապետ*

*Ես լսում եմ ու մտանում, ես տեսնում եմ ու հիշում,  
ես կատարում եմ ու հասկանում: (Կոնֆուցիոս)*

Ուսումնական հաստատություններում իրավաբանական կլինիկաների ստեղծման գաղափարն առաջացել է ԱՄՆ-ում XX դարի 20-30-ական թթ., 90-ական թթ. այն տարածվել է Եվրոպայում, իսկ ՌԴ-ում 1-ին իրավաբանական կլինիկան բացվել է 1995 թ-ին: ՀՀ-ում 1-ին անգամ իրավաբանական կլինիկա գործել է 1999 թ-ին Երևանի պետական համալսարանում: Այժմ իրավաբանական կլինիկաները լայն տարածում են ստացել: Որպես կանոն, իրավաբանական կլինիկաները ստեղծվում են իրավաբանների ամերիկյան ասոցիացիայի և բազմաթիվ այլ ֆոնդերի (Ֆորդի, Սորոսի, «Եվրագիայի» ֆոնդ և այլն) աջակցությամբ:

Տեսական գրականության մեջ «իրավաբանական կլինիկա» տերմինն օգտագործվում է 2 իմաստով՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում և որպես հատուկ ուսումնական ծրագիր:

